


20. 01.0

Հարիբես

Դաշնակությունը
հարիբ շետ




E105 YAM 015 JAN 2010

05 FEB 2007

Ա. ԿԱՐԻՆՅԱՆ

ԴԱԵՆԱԿՅՈՒԹՅՈՒՆ
ՓԱՍՏԵՐԻ ԴԵՄ



4023

ՀՀ Ա. Կ. Կ. Պ. Պ. Հ. Ա. Հ.
Թիկնիք—1926.



20 MAY 2013

20.010

ԱՐ
ԱՐ

21191

329.14 Հայոց բառեր
4-32 Հայության պատմություն
պատմություն կամ պատմություն

ՏՏ-4736 28/Մ-29

ՍԻՄԵՅՈՆ ՎՐԱՅՅԱՆԸ ՓԱՍՏԵՐԻ ԴԵՄ

Սիմեյոն Վրացյանը Ամերիկայի «Հայությունիք»-ում քննադատության և յենթարկել «Խմբերի խստական պատերազմ և Հայաստան» բրոշյուրը: Այդ ժողովածուի մեջ բերված փաստերն և վավերագրերը դրդել են նրան հանդես գալ յերկարապատում մի հողվածաւարքով Խաչնակցության պաշտպանի դերում:

Պետք է ասել վոր պաշտպանողականը կազմված և բավական յուրօրինակ ձևով: Իրեն և իր ընկերակիցներին ցեխից դուրս հանելու համար Սիմեյոն Մասուրյան-Վրացյանը վողորոք հայտարարում է, վոր Դաշնակցության վերագրված փաստերը բոլորն ել հիմնը վաճառքած են «Կեղծիքի» վրա: Այդպես ել կոչվում են նրա հողվածաշարքը - «Կեղծիքի աշխարհում» (տես «Հայությունիք», № 4924-4925): «Կեղծիքի» և «Թյուրիմացության» վրա յե հիմնված, նրա կարծիքով, վողջ բրոշյուրը: «Կեղծ» են և ակնհայտնի փաստերն և բոլոր այն վավերագրերը, վորոնք արտագրված են բրոշյուրի մեջ բառացի կերպով, առանց վորեն փոփոխությունների, հայ թերթերից՝ «Հորիզոն» - ից, «Մշակ» - ից և «Արարատ» - ից:

Յես, ճիշտ ասած, չեյլ կանգնիլ ամենաին Սիմեյոնի թոթովանաքի վրա, յեթե նա ցունենար իր վորոշ սիմպոտմատիքական նշանակությունը: Այսպես, Վրացյանի և նրա մյուս ընկերակիցների - Ահարոնյանի և Վ. Խավառարդյանի յելույթները ցուցադրում և ապացուցում են չափազանց կարևոր մի յե-

բնույթի գոյությունը։ Այդ այն ե, վոր արտասահմանյան աշխատավորության քննադատական արշավը Դաշնակցության դեմ վերջերս ընդունել ե ավելի լայն յեվ խոր բնույթ։ Յեվ հենց ագդել ստիպել ե Վրացյանին գրիչը վերցնել ձեռքը և հանդես գալ պաշտպանողական այն խոսքերով վոր գետեղված են «Հայրենիք»-ի մեջ։ Վորքան ել զավեշտական և տափակ են այդ հոդվածները, այնուամենայնիվ նրանք հատկանշական են վորպես Դաշնակցության նորագույն «կուրսը» ցուցադրող նշաններ։ Հենց այն հասարակ հանգամանքը, վոր իրեն և իր ընկերակիցներին արդարացնելու համար Սիմ. Վրացյանն ստիպված է դիմել ակնայտնի փաստերի բացարձակ խեղաթյուրման և սուսա հերյուրանքների ոգնությանը, պարզապես ապացուցում ե այն, վոր զաշնակները կորցրել են իրենց գլուխը յեվ հուստական ճիգեր են անում արդարանալու մասսաների առաջ։

Դա վատ յերեսույթ չե։ Դուքեկան և հակառակորդին տեսնել զավեշտական կացության մեջ։ Յեվ ավելի և դուքեկան և տեսնել այդ դրության մեջ հայ նացիոնալիստներին, վորովհետև դրանով բացերև կերպով հաստատվում ե Դաշնակցության անկման և մահվան ազոնիալի փաստը։

1.

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՏԱՇԿԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես հայտնի յե, Դաշնակցության կենարունական կազմակերպության մեջ դեկապարով գերը միշտ ել կատարել են ուստահայ քաղքենի մտավորա

կանները։ Դրանք սպասավորել են կովկասահայ բուրժուազիային և յելներով այդ դասակարգի շահերից՝ առաջարկել են տաճկահայ ժողովրդի «ազարագրման» հարցը։

Իսկ մեծ իմակերիալիստական պատերազմի որերին վողերված ուսւ ցար Նեկոլայի անորոշ խոստումներից՝ միենույն այդ գործիչները կամավորական գունդեր են կազմակերպել թյուրքիայի դեմ և կոչ են արել հայ ժողովրդին կավել ուսւ ցարական զորքերի հետ միասին «թյուրքահայ նահանգների» գրավման համար։

Վոչ վոքի համար գաղտնիք չե այն, վոր կովկասահայ բուրժուազիայի կողմից Տաճկահայաստանը նկատվել է վորպես տնտեսական ապագա գործառնությունների մի վայր և հենց դրանով ել շահագրգուել է կովկասահայ ազգայնականներին։ Կովկասահայ բուրժուատականներից բաղկացած Դաշնակցությունը յերբեք չի լսել թյուրքահայերին, հաշվի չի առել նրանց կարծիքն և տեսակետը և միշտ ել զեկավարվել ե բացառապես ուստահայ «հասարակության» (կարդա բուրժուազիայի) տեսակետներով։

«Իմակերիալիստական պատերազմ և Հայաստան» բրոշյուրի մեջ մենք շեշտել ենք ամենքին հայտնի այդ փաստը և միաժամանակ հիշատակել այն, վոր աաճկահայությունը ժամանակին ուղարկել եր Կովկաս հատուկ պատվիրակություն և կատեզորիկ պահանջ եր դրել ուստահայերին լինել նրբանկատ, վոչ մի պարագայում չմիջամտել թյուրքահայ գործերին, իսուսակել կամավորական գնդերի կազմակերպումից և ան-

տեղի վայրահաջությամբ չվատթարացնել թյուրքահայերի առանց այն ել ծանր կացությունը:

Իր հոդվածների առաջին մասում Վրացյանը ցանկանում է ապացուցել վոր այդպիսի բան չի յեղիլ և վոր Դաշնակցությունը գործել և տաճկահայերի ցանկությամբ յեկ հրահանգներով:

Տաճկահայերը, հայտարարում եւ վճռական տուվ Վրացյանը, այդպիսի պատվիրակություն չեն ուղարկել...

... «Կարինյանը—և բոլոր կարինյանները իւ մի հայլաքված՝ չեն կարող ցույց տալ մի հատիկ դեպք, վոր ապացուցաներ, թե տաճկահայությունը... պահանջ եր գրել ուստահայերին... խուսափել կամավորական գնդերի կազմակերպումից, մինչդեռ հակառակը հաստատող բազմաթիվ փաստեր կան: Յեթե կարինյանները ժամանակն են համարում գրելու այդ ըրջանի պատմությունը, պետք եւ լինեն անաշառ ու բարեխիզան ներկայացնելու համար իսկական իրողությունները, իսկ յեթե իրենց նպատակն եւ ամեն գնով Դաշնակցությունը սեացնել, պարտավոր են ընարել ավելի մաքուր գենքեր»...

Կանգնենք ամենից առաջ այդ կետի վրա: Պետք ասել, վոր Վրացյանն իր հոդվածում չի ապացուցանում ամեններն այն, վոր տաճկահայերը, հիրավի, վորեւ կերպ ցանկություն են հայտնել «զարկ տալ կամավորական շարժման»: Այդ մասին գոնե նա իր հիշած բազմաթիվ փաստերից հասարակ փաստ անգամ չի բերում, այլ բավականանում եւ դատարկ հայտարարությամբ:

Անցնենք այժմ մեր հայտարարությանը: Հակառակ վճռական իր պնդումին, ինքը Վրացյանն ել չի ժխտում այն, վոր «Քաջազնունին արտահայտվել և հակառակ կամավորական շարժման» (տես «Հայրենիք», № 4024, առաջին եջ): Նա միայն ավելացնում եւ դրան, վոր «Քաջազնունու հետ յեկող դաշնակցական Խեցըն կողմանակից եր այդ շարժման, վորին մասնակցեց նույնիսկ իր կյանքի գնով»:

Ընդունենք մի բռպե, վոր այդ այգակա ել յեղել հ, և վոր Խեցըն մասնակցել և կամավորական այն շարժմանը, «վորի անհրաժեշտությունը նա ինքը պաշտպանել ե»:

Միթե զբանով ապացուցվում ե այն, վոր տաճկահայերն ևս կողմնակից են յեղել այդ շարժմանը կամ թե այն, վոր ուստահայ և դաշնակցական Խեցըն սուբյեկտիվ կարծիքը արտահայտությունն ե յեղել թյուրքահայ ժողովրդի և աշխատավորության տեսակետների: Վոչ, ի հարկի:

Արդեն այն հասարակ հանգամանքը, վոր «յեկվոր» դաշնակցականներից մեկը դեմ և յեղել կամավորական շարժման, յերեվան և հանում ինչ վոր մեկ ուրիշ, արտաքին գործոնի գոյությունը:

Յեկ անա բոլոր տվյալների հիման վրա մենք իրավունք ունենք յեղբակացնելու, վոր «արտարին» այդ գործոնի դերը կատարել և հենց այն տաճկահայությունը, վորի մասին յետին թվով անապացուց հայտարարություններ և անում պարոն Վրացյանը: Այդ «տաճկահայությունը» բավական վորոշ կերպով ցուցաբերել և իր վերաբերմունքը գալիք դեպքերի նը-հատմամբ և հենց գրանով ել ստիպել և թե Քաջազնու-

նուն և թե՛ մյուս դաշնակցականներին արտահայտել ավելի «զգույշ» տեսակետ:

Բավական հետաքրքրական տեղեկություններ կարելի յե՛ գտնել այդ մասին դաշնակցական մտավորականներից մեկի, պ. Ա. Դո-ի «Մեծ գեպքերը Վասպուրականում» (1914—1915 թվականներին) ժողովածուի մեջ: Խոսելով դաշնակցականների 1914 թ. երրորդի ընդհանուր ժողովի մասին՝ նա հաղորդում է հետեւյալը. «Այդ կուսակցության ընդհանուր ժողովը երգումի մեջ իր զբաղմունքներն եր շարունակում, յերբ բռնկվեց համակրոպական պատերազմը և Տաճկաստանը հայտարարեց սեփեր-բերլիկ (պարտադիր զինվորակոչություն): Դաշնակցության ընդհանուր ժողովը քննության առարկա դարձներավ ստեղծված գրությունը, վորոշեց հայտարարել գալառական մարմիններին, վոր ժողովուրդն իրենի ոսմանյան պետության քաղաքացի, պարտավոր և կատարելի իր քաղաքացիական պարտքը»*): Ճիշտ միենույն այդ որերին երգում են համուռմ յերիտասարդ թուրքերի յերեք ներկայացուցիչները՝ Նաջիբ-բեյ, Բուլար-եգիպտին և Հիլմի-բեյ, վորոնք առաջարկում են հայերին կանգնել Թյուրքիայի կողքին, կովել Ռուսիայի գեմ և փոխարեն գրան ստանալ «հայկական ինքնավարություն»: Մեզ հաղորդած տեղեկությունների համաձայն, Դաշնակցության այդ ժողովին մասնակցել են, ի միջի այլոց, նաև Խոստոմ, Արամ, Վուամյան, Քննության ժամանակ յերկու արմատական առաջարկներ

*). Ա. Դո-ի «Մեծ գեպքերը Վասպուրականում» (1914—1915), էջ 70—71.

են արվել: Մեկը յեղել է հիշյալ յերիտասարդ թուրքերի առաջարկը, իսկ մյուսը՝ խորհրդաժողովին մասնակցող ոռւսահայ անդամներից մեկի տեսակետը, վորով անհրաժեշտ եր համարվում է կամավորական գնդերի կազմակերպումը Կովկասում և հայերի ակտիվ գործակցությունը ոռւսական զորաբանակի հետ:

Երրորդի ժողովը ընդունում վոյ առաջին և վոյ ել յերկրորդ առաջարկը և բավական կտրուկ կերպով ընդգծում ե, վոր հայ ժողովուրդը Թյուրքիայում «պարտավոր և կատարելի իր քաղաքացիական պարտքը» և լինել միանգամայն չեզոք պատերազմի ժամանակ:

Կասկածից գուրս և այն, վոր Տաճկաստանում գործող դաշնակցականներն ընդունել են այդ վորոշումը Թյուրքահայ հասարակական մտքի ազդեցության ներքո: Այսքան, վորքան նրանք գործել են Թյուրքահայ միջավայրում, այդչափ և յենթարկվել են Թյուրքահայ միջավայրում տիրող ընդհանուր արամագրությանը: Ահա զբա համար ել Երրորդի վորոշումը անուղղակի կերպով ցուցադրում ե, վոր իրենք Թյուրքահայերը յեվս նախատեսել են զալիք անակընկաները բավական վորոշ կերպով շեշտել են չեզոք «քաղաքականության անհրաժեշտությունը» ու թելացրել միենույն անել Երրորդի դաշնակցականներին:

Յես գիտավորությամբ կանգնում եմ այդ փաստի վրա, վորովետև նա առանձին հատակությամբ պարզում ե հենց այն, ինչ վոր ջանում է Ժիտել Սիմ. Վրացյանը:

Սակայն այդ փաստի կողքին կարելի յե՛ հիշել ուրիշ փաստեր ես, վորոնք գուցե նույնիսկ ավելի ցայտուն են և ավելի հատկանշական:

Այդպիսի փաստերից եր որինակ, Պոլսո Ազգային ժողովի և պատրիարքի հայտնի դիմումը կաթողիկոսին և սուսահայ հասարակությանը, վորով թյուրքահայությունը ինտրում եր դարձյալ լինել չափազանց շրջանկատ և վոչ մի գեպրում անտեղի քայլեր չծնոնարկել առանց թյուրքահայերի լիազորության։ Իր ժամանակ հայ մամուլի եջերում բավական բնորոշ տողեր են նվիրվել թյուրքահայերի առանձին այդ տեսակետի քննությանը։

Միևնույն հարցը բավական մամբակրկիտ քննության և յենթարկվել նաև Թիֆլիսի հայունի «Հայոց Ազգային Համախորհրդի» նիստերում, վոր կայացել են 1917 թվին, սեպտեմբերի 29-ից մինչև հոկտեմբերի 13-ը։ Այդ Համախորհրդի մեծամասնությունը կազմում էին դաշնակցականները։ Ազգային Համախորհրդի նիստերին՝ արձանագրությունների համաձայն՝ մասնակցել են 58 դաշնակցական։

Համախորհրդի XIII-րդ նիստին բոլոր անդամների կողմից առաջարկվել են դաշնակցականներին զեկուցում ներկայացնել «Բյուրոյի վարած քաղաքականության մասին նախկին կառավարության հետ»։ Ն. Ազրայանն իրեն պատասխան հայտարարում է դաշնակցականների կողմից, վոր Բյուրոյի մասին զեկուցում «պետք եւ տա Գ. Խատիսյանը»։ Թե վորքան անհարմար եյին զգում դաշնակցականներն իրենք—այդ յերեւում եւ նըանից, վոր դաշնակցական Գ. Խատիսյանի փոխարեն զեկուցողի դերում դուքս և բերդում «դիվանագետի հօչակ» վայելող տիբահոչակ Ս. Հարությունյանը, վորն այնքան անորոշ բացարձություններ եւ տալիս, վոր մեծ անբավականություն ե-

առաջ բերում։ Համախորհրդի անդամները նկատում են, վոր «զեկուցումը լրիվ չե», և պահանջում են «ավելի լիակատար զեկուցում»։ Ս. Հարությունյանը շփոթված ձայնով պատասխանում ե, «վոր դժվար ե այդպիսի ընդարձակ հարցում ամեն ինչ նախատեսել» (!!)։ Կեոն նորից պահանջում ե, վոր «ամեն ինչ ասվի»։ Թյուրքահայերի ներկայացուցիչներից մեկը, պրոֆ. Հակոբյանը շեշտում ե, վոր «Թյուրքահայերը ներկա պատերազմի ընթացքում լոյալ են յեղել յեվ հակառակը պնդելը պրովկացիա յե»... Յեվ այդպես անվերջ։ Պատկերն ավելի լրիվ նկարելու համար յես կը բերեմ այստեղ բառացի կերպով ժողովականներից մի քանիսի բնորոշ հայտարարությունները։ Այսպես, որին, ՀՀ-րդ նիստին, հոկտեմբերի 12-ին, Հ. Առաքելյանը հայտնում ե, վոր «պատերազմի նախորյակին կաթողիկոսի պատվիրակ նուրբար փաշայի կողմից Թիֆլիս յեկավ դոկտոր Տաղավարյան (պաշտոնապես նա յեկել եր Յեղիպատոսի Բարեգործական Ընկերության ճյուղ բանալու) ծածուկ հանճնարարություն ունենալով հայտարարել վոր Բյուրոն արկածախնդրական քայլերից զգուշանա»։ «Յես, ասում ե Հ. Առաքելյանը, սրան ուղղեցի Մեսրոբ յեպիսկոպոսի և Ս. Հարությունյանի մոտ։ Սակայն յերեք ամեն այստեղ մնալով, նա չկարողացավ Ազգային Բյուրոյին ներկայանալ յեվ պաշտոնապես իր միսափան կատարել վորովինետեկ Բյուրոն վկամեցավ լսել պատրիարքի յեվ Թյուրքահայերի կարծիքը»։

Դարձյալ Բյուրոյին հայտնի յեր, վոր Գերմանիան առաջարկում եր հայերին լոյալ մնալ՝ խոստանալով ավտոնոմիա և հայտնելով, վոր հակառակ դեպ-

քում բնաջինջ կը լինեն: Այս առաջտրկությունն ուղարկված եր Բյուրոյին, բայց պատասխանը հայտնի չե»*): XVI րդ նիստին, հոկտեմբերի 12-ի յերեկոյան, տաճկահայերի ներկայացուցիչ Թերզիբաշյանը քննադատում և Ազգային Բյուրոյի գործունեյությունը և գտնում ե, վոր «նա կատարել ե մի քանի տեսակ սխալներ, նախ՝ իրավական, քանի վոր պատերազմի շնորհիվ խառնակ գրություն ստեղծվելով, Բյուրոն՝ իր ռուսահայոց մարմին, իր ծեռքն առավ Տաճկահայատանի հարցի լուծումը, վոր տաճկահայերի համար կյանքի և մահի խնդիր եր և գերազանցորեն նրան եր պատկանում լուծել: Բյուրոն մինչև անզամ զկամեցավ լսել Տաճկատանից յեկած պատգամավորներին, վորոնք յեկել ելին զգուշացնելու արկածախնդրական քայլերից, արդարանալով նրանով, թե բանը բանից անցել եր... Բյուրոն լսելով Վարանցով-Դաշկովի խոստումը՝ իրագործել Գիրսի ծրագիրը, համաձայնեց նրա առաջարկության, կազմելու կամավորական խմբեր, վոր նրա գործը չեր»: Ապա իր խոսքի վերջում Թերզիբաշյանը բոլոր մյուս պատգամավորների հետ միասին դժոնություն և հայտնում, վոր Բյուրոյի համարատվությունը լրիվ չե, վոր նույնիսկ գեկուցանողը բացակա յեր ժողովին, և պահանջում ե, վոր նոր, լիակատար հաշիվ տրվի պետք յեղած վավերաթղթերով (եջ 40):

Յես չեմ կանգնում մնացյալ ժողովականների (և Աթարեկյան, Բոնապարտյան, Խաչիանյան և այլն)

*): «Հայոց Ազգային Համախորհրդի արձանագրությունների բնագիրը (Պետական Դիմական, 1917 թ., եջ 37—39,

միանման հայտարարությունների վրա: Համախորհրդին ներկա գտնվող դաշնակցականներից վոչ մեկը չի կարողացել ժխտել կամ վորեվի առարկություն բերել թյուրբահայերի հայտարարությունների համեմ:

Այսպես և փաստը, պարոն Վրացյան: Յեվ այդ փաստն արձանագրված ե ու տառերով Համախորհրդի այն բնագիր արձանագրությունների մեջ, վորոնք մի տարորինակ պատահկանության շնորհիվ ձեր ընկերները չեն կարողացել տանել արտասահման կամ վոչնչացնել:

Դրա համար ել մենք հնարավորություն ունենք մեր տխուր անցյալի արյունու այդ եջը վերականգնել իր իսկությամբ և ձեր պղնձե ճակատին գամել խայտառակ ստախոսի անունը:

Անցնենք այժմ յերկրորդ առարկությանը:

2.

ՀԱՅԱՍՏԱՆԻ 1920 ԹՎԻՆ

«...Հայաստանի կացությունը, տուում և Սիմ. Վրացյանը, 1920 թվին տաճկական պատերազմից առաջ բնավ այն չեր, ինչ վոր Կարինյանն և ձգնում ցույց տալ... Հայաստանում սովորված այդ ժամանակ, ժողովուրդն ուտելիք ուներ, ամբողջ յերկիրը ցանված եր, զաղթականները տեղավորված ելին և պետական ոգությամբ անցել ելին շնարար աշխատանքի, թափառող վորք ու յերեխաներ գոյություն չունելին, վորովհետեւ ամեն տեղ կային վորբանոցներ ու աշխատանոցներ...»: Դժվար ե յերեակայել ավելի յերանա-

վետ դրություն, քան այդ պատկերը։ Պետք ե ասել,
վոր ընդհանրապես 1920-ի մասին տարածված ե վերո-
հիշյալ նկարագրությանը մոտ կարծիք։ Ըստ յերե-
վույթին մի վորոշ տարբերություն 1920-ի և 1918-ի
մեջ յեղել ե։ Հայաստան ե, վոր 1920-ին Հայաստանի
կացությունը համեմատաբար ավելի լավ ե յեղել քան
1918-ին —ուստական զորքերի նահանջից հետո։ Նպաս-
տել ե դրության այդ փոփոխմանը յերեխ նաև ամերի-
կացիների կողմից հասցրած տնտեսական ոգնությունը։
Այսպես թե այնպես, պաշտոնական տվյալների համա-
ձայն 1920-ին Հայաստան ե մտել բավական մեծ քա-
նակությամբ պարենավորում և ուրիշ պարագաներ։

Սակայն խնդիրն այդ չե։ Գլխավոր հարցն այն
ե, թե ինչ ե ստացել ինքը հայ ժողովուրդը և ա-
ռաջին հերթին գյուղական ժողովուրդն այդ բոլոր
գումարներից։

Ամերիկայից ստացված հացը և պարենը մտել
են ամենից առաջ Յերևան և միաժամանակ քեծա-
գույն քանակությամբ կուտակվել մասնավոր չարա-
շահների ձեռքին։ Հայ ժողովորդի անունով ստացված
ապրանքների շրջանառությունը մայրաքաղաքում
ստեղծել ե, ինարկե, վորոշ տրամադրություն հասարա-
կության այն շրջաններում, վորոնք մոտ են յեղել
տիրողներին և չարաշահներին, ոգտվել են ամբարնե-
րից և կլանել են «մեծահոգի ամերիկացիների» ու-
ղարկած «քաղցր կաթը»...

Բայց հայ ժողովուրդը միմիայն Յերևան չի
ապրում։ Հայ աշխատավորության գերազանց մեծա-
մասնությունը գտնվում է Յերևանից դուրս, գավա-
ռական Հայաստանում։


Ենք ահա հենց այդ ժողովրդի գրությունը յեղել
ե չափաղանց ծանր և գժվարին։ Հավանական ե, վոր
հենց այդ հանգամանքն ել գրդել ե Շանթի հայտնի
պատվիրակությանը մոայլ գույներով նկարել Հա-
յաստանի տնտեսական դրությունը և պահանջել նու-
սիայից պարեն Հայաստանի համար։

Ինչ վերաբերում ե «ցանքսերին» բավական ե
միայն հիշեցնել, վոր Հայաստան մանելուց հետո հայ
մեծամասնականների առաջին գործն և լինում հացի և
սերմացուի մատակարարումը ժողովրդին։ Խորհրդային
նուսիան ստիպված ե լինում նույնիսկ հատկացնել
Հայաստանին հենց առաջին տարին մեկուկես միլիոն
ութիւնի բացառապես յերկը պարենավորման համար։
Հարց ե ծագում, թե ուր են անհետացել լնդամենը
յերկու ամսվա շնթացքում Հայաստանում ամբարված
անսպառ ապրանքներն և Հայաստանի «բոլոր» ցան-
ված արտերի բերքը։ Նույնը պիտի ասել ե. «գաղթա-
կանների տեղափորման» մասին։ Ինքը վրացյանն ել
զիտե, վոր սուտ ե ասում։ Յեթե այդպես չլիներ, նա,
ինարկե, կշապեր փաստերով, և որինակներով ու
թվերով հաստատել իր հայտարարությունը։ Այսինչ
իր հողվածներում կա հասարակ փաստ անգամ չի բե-
րում։ Յեթե այդքան լավ լիներ յերկը դրությունը
1920 թվին, հայ մեծամասնականները ստիպված չեյին
լինի յերկու տարի շարունակ զբաղվել յերկը պարե-
նավորման և գաղթականների տեղափորման գործերով։
Խորհրդային Հայաստանի կառավարության գործը
1920 թվին գժվար ե լինում հենց նրա համար, վոր
նա ստացել եր կատարելապես քայլքայլաված տնտեսու-
թյուն, գատարկ և ցամաք արտեր, դատարկ պետա-

կան ամբարներ, ավելի ևս դատարկ պետական դրամարկի և գաղթականների ու վորրերի թափառական խմբեր:

Սակայն մենք չեցինք ցանկանալ բավականալ անուղղակի այդ տվյալներով։ Բարեբախտաբար այդ կողմի լուսաբանության համար բացի Վրացյանի անապացույց հայտարարություններից մենք ունենք ուրիշ վավերազրեր յեմ։ Այդ—1920-ի հայ պարբերական մամուլն ե, վորը նկարում և միանգամայն այլ կերպ Հայաստանի տնտեսական կացությունը։ Նույն իսկ դաշնակցական պաշտոնական որգանները խոսում են, վորքան ել այդ տարրոինակ ե, Վրացյանի դեմ։ Այսպես, որինակ, մոայլ գույներով են նկարում Հայաստանի տնտեսական կացությունը Գր. Զալիսուշյանը («Հառաջ»), № 257), Մ. Մնացականյանը (№ 188), Սարգիս Յերիցյանը (№ 207), Առանձին գավառների ծանր գրության մասին մոայլ նկարազրություններ կարելի յե տեսնել միւնույն դաշնակցական «Հառաջ»-ի № № 137, 221, 222, 188, 192, 165-ի մեջ։ Կանգնենք այդ տեսրություններից մի քանիսի վրա։ Սարգիս Յերիցյանը, որինակ, կանգ առնելով գաղթականական հարցի վրա, շեշտում ե, վոր «Յերկար ժամանակ յեղափ վոր զաղթականական կյանքով հետաքրքրուող մը կամ անոր անվերջ ցավերից արտահայտվող մը չունանը վոչ մամուկի, վոչ հայ իրականության մեջ»... Ապա ամենահուսահատական զյուներով նկարելով գաղթականների կացությունը, վերջացնում ե. «Հ. Հ. կառավարությունը պետք ե խորապես համոզված լինի, վոր տիրող ներկա աննորմալ կացությունը մեծ վտանգ կը սպառնա հայ ժողովրդի

մի վորոշ մասին, զիտակցի բոպեյի լրջությունը, մտնի զաղթականի ու հայցակարաս չքավորի հոգեկան լարվածության մեջը և ըստ այսու անհապաղ միջոցներ ձևոք առնիւ։ «Հառաջ»-ի մի ուրիշ հեղինակ կամգնում և անմիջապես Յերեանի գրության վրա և շեշտում ե, վոր «Յերիցները հացի և մաս խանութների առաջ վոչ թե վերջանում, այլ և անտառնելի և գմոխային կերպարանք են ստանում»։ Դատնալով «պոչեր»-ի խնդրին, «Հառաջ»-ի խմբագրությունն իր կողմից նկատում ե. «Հավաքված ամբոխը, մանավանդ հացի համար, պատրաստ և յենթարկելու ամեն տեսակ պրովակացիայի և ամեն յերկույթ յենթարկելու խիստ քննադատության»... («Հառաջ», № 199)։ Եատ բնորոշ և նաև դաշնակցականների բարեկամ սուս պրոֆեսոր Մանուկյանի կարծիքը, վոր գետեղված և գործյալ «Հառաջ»-ի մեջ։ Մանուկյանը, վորը ըստ յերեսութիւն տրամադրի և յեղի ավելի լավառն լինելու Հայաստանի ապագայի նկատմամբ, հայտնել և հետեւալը. «Հայաստանում յեղած ժամանակ յես նարավորություն ունեցած ընդհանուր գաղտիար կազմելու այդ յերկրի տնտեսական և ֆինանսական գրության մասին. բնութագծել այն այլ կերպ, քան վորպէս զգվարին և նույնիսկ ծանր, չի կարելի»։ Միւնույն խնդրի առթիվ Յերեանում հրատարակվող «Փողովուրդ» պարբերաթերթը «Սովի ուրբականը գավառում» տառչնորդողի մեջ նկատում ե. «Գյուղացիությունը վճառված և հուսահատված և. Մովք սպառնում և պատճառել մեծ չարիքներ։ Ամերիկացիների բաժանած հացը, զլիավորապես գաղթականներին, անկարող և վրկել ժողովրդին փոթորիկներից, որական կես ֆունտ ալյուր, այն ել վոչ բոլորին,



սովի առաջը չի առնիր։ Ամենասատուց տեղեկությունները, վոր մենք ժողովել ենք Դիլիջանի, Ղարաբիլիսայի և Նոր Բայազետի գավառների, մանավանդ Ապարանի մասին, վկայում են, վոր դրությունը այժմ սուկալի յե։ Վոչ պակաս հուսահատական պատկեր և նկարում և «Հառաջ»-ը իր «65 դիակ» վերտառությամբ առաջնորդողի մեջ։

«Մի բոպե, կարդում ենք այդաեղ, փորձեցեք կենտրոնանալ այս թվերի վրա՝ որական 65 դիակ միայն մայրաքաղաքում՝ պետության ազքի առջև, հապա ի՞նչ է կատարվում յետ ընկած անկյուններում, առենք մի Դարալազյագում կամ Նոր-Բայազետում։ Այստեղից ստացված տեղեկություններն ուղղակի սարսափելի յեն, կատարյալ կոտորած և տեղի ունենում մեր յերկրում։ Սովոր ու ցուրտը հնծում են անխնա ու անհաշիվ, յեվ ամեն որ գերեզման են իշնում հազարավոր կյանքեր։ Ապա այդ առաջնորդողի հեղինակը, պատմելով, թե ինչպես Ալեքսանդրապոլի Պոլիգոնում հավաքված «հազարավոր» գաղթականները «բառիս բուն նշանակությամբ կոտորվում են», մինչդեռ նրանց «կարելի յեր տեղափորել բազմաթիվ պարապ մնացած գյուղերում», հետեւալ նշանակալից խորհրդածությամբ և ավարտում իր նկարագրությունը։ «Վերջի վերջո մեր (այսինքն դաշնակների) պետական շինտրաբությունն ամփոփվում և ճառերի, ծրագրերի, հրամանների և անհաշիվ համարագրված ու կնքված թուղթերի մեջ, իսկ... Պոլիգոնում գաղթականները կոտորվում են, Դարալազյազ ուղարկված ալյուրի փոխարեն պարկերից քար ու ավագ և դուրս գալիս, յեվ զինվորական հիվանդանոցում զինվորները մեռնուա-

են ծանծի պես և Յերեվանում որական 65 դիակ և թաղվում... Ուր և վախճանն այս անհանդուրժելի կացության... Ուր ենք գնում այսպես։

Կանգնենք այսաեղ, Յես բերում եմ միայն պատահական կտորներ և 1920 թ. դանազան ամիսներին վերաբերվող նկարագրություններ, վորոնք, ինչպես նկատում ե ընթերցողը, քաղված են գրեթե բացառապես դաշնակցական «Հառաջ»-ից։ Բոլոր այդ հոդվածները խսուեմ են նայ բնակչության մասին, վորն այսպես թե այնպես գտնվում եր ավելի լավ կացության մեջ, քան ազգային փոքրամասնությունները։ Ինչ վերաբերում ե ոռւսներին և թուրքերին, դրանք յեղել են միշտ ավելի ծանր կացության մեջ, չնորհիվ հենց նրա, վոր հանդիսացել են թալանի և բռնակալ շահագործման մշտական որյեկտ։ Բավական և միայն հիշել այստեղ Սուրմալիի հայտնի կոտորածի և թալանի պատմությունը, Զանգիբրասարի, Բաղարչչայի և այլ վայրերի «թալան»-ը...»

Հարց ե ծագում այժմ—իրավունք չունի⁵ արդյուք կողմանակի դիտողը և անաչառ ընթերցողն այդ բոլոր տվյալների հիման վրա յեզրակացնել, վոր Հայաստանի կացությունը 1920-ին իրավես յեղել և ծանր և անտանելի ու «սովի ուրվականը» տակավին պատռում եր գավառական Հայաստանի բոլոր վայրերում։

Ժամանակը չէ արդյուք, վոր պարունայք Վրացյան, Զիլինկարյան և Զամալյան իրենց պնդումները «1920 թ. յերանակեան կացության» մասին հաստատեն և ապացուցեն մի քանի կոնկրետ տվյալներով ու թվերով։ Ի վերջո այդ բոլոր հետաքրքրա-

կան եւ և հայ հասարակականության ապագա պատմաբանի համար, քանի վոր մինչև այժմ ել մեղ հայտնի չե, թե վորքան հաց և սերմացու յե բաշխվել գավառական Հայաստանին, վորքան և ստացվել արտասահմանից և ուր են գնացել ստացված ապրանքները, վորչափ մեծ են յեղել յերկրում կատարված ցանքսերը, քանի ջրանցք կամ առու յե շինվել կամ նույնիսկ վերանորոգվել - վերջապես, վորքան դրամ և ծախսվել այգեգործության կամ ընդհանրապես շինարարության վրա:

Ահա, յերբ այդ փաստական տեղեկությունները ներկայացվեն ապացուցված տվյալներով, այն ժամանակ մենք ստիպված կը լինենք 1920 թվի հայ մամուլի տեղեկությունները համարել «պանիքական» և «տենդենցիոզ» և ընդունել, վոր 1920 թ. ընթացքում Հայաստանում տիրող բարեկարգ վիճակի մասին տարածված լեգենդան ունի վորոշ ռեալ հիմունքներ:

3.

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԻ ՑԵՎ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԻ ՄԱՍԻՆ

Սիմ. Վրացյանը հայտարարում է, վոր խորհրդագին կառավարության հետ բանակցություններ վարելու համար ընտրված պատվիրակները հակառակ մեր պնդումին «անձնապես ազգեցիկ լինելով Մոսկվայում»՝ միաժամանակ հայտնի եյին նաև վորպես խաղաղության կողմանակիցներ։ Լ. Շանթը, ասում է նա, «Ճերմ կողմանակից եր Ռուսաստանի հետ հասկացողության

գալու մտքին», Հ. Տերտերյանը «ռուսական միջավայրում յեփած, Ռուսաստանի հետ համաձայնության գալուն կողմանակից», և Զառաֆյանը «Բագվում գործակից բալզմիկների»։ «Ընտրությունը յեղել ե այն հաշվով, վոր կարելի լինի ավելի հեշտ յեկ ամուր կապեր ստեղծել բալզմիկների հետ»։

Յերկրորդ մեր առարկությանը «Ճամբորդության գիտավորյալ դանդաղության» մասին՝ Վրացյանը պատասխանում է, վոր այդ «շինծու և նպատակավոր մեղադրանք» եւ։

Վորքան ել տաղակալի յե կանգնել այդպիսի եպիգոդիկ գեպքերի վրա, այնուամենայնիվ մենք ստիպված ենք այդ անել քանի վոր պատահական գեպքերն ևս կարենու են դաշնակցական կուսակցության բնորոշման համար։

Նախ՝ կազմի մասին։

Ամենքին հայտնի յե, վոր յերբ «խաղաղության» համար պատվիրակություն և ընտրվում, սովորաբար պատվիրակության անդամներ են նշանակվում առաջին հերթին խաղաղության կողմանակիցները։

Ներկա պարագայում կատարվել ե հակառակը։

Մոսկվա յեն ուղարկվել խորհրդային կառավարության ամենակատաղի և մոլեզին թշնամիները։

Շանթը գուցե և վատ չե, վորպես գեղագետ և դրամատուրգ Բայց այդ միենույն Շանթը, տգետ լինելով քաղաքական խնդիրներում, ավելի ևս մեծ համարում ուներ, վորպես «քաղաքակիրթ Յեվրոպայի» յերկրագուու։ Նույնիսկ Մոսկվայում, մասնավոր խոսակցությունների մեջ նա չի ծածկել յերբեք իր թշնամական և բացասական վերաբերմունքը դեպի Ռու-

սաստանը և շատ պարզ կերպով հայտարարել ե, վոր ինքը կողմնակից Ե «անգլիական որիենտացիայի»: Այդ գիտե և ինքը, Վրացյանը, և դրա վրա այլու մենք չենք ծանրանում:

Հ. Տերտերյանը միշտ ել հայտնի յե յեղել, վորպես դաշնակցական պրիմետիվ մտավորական, իսկ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո — վորպես խորհրդային իշխանության ամենակատաղի հակառակորդ: Տերտերյանի «անձնական ծանոթները» հնարավորություն են ունեցել տեղեկանալ Մոսկվայում, վորնա մնացել ե մինչև վերջ խորհրդային կառավարության անհաջա հակառակորդ:

Վերջապես, Զառափյանը հենց Բագվում ընդհարումներ ե ունեցել մեծամասնականների հետ, և նրա գործակցությունը արտահայտվել ե բացառապես հակառայլշեիլյան ամենաստոր պրովակատորական գործունեյության մեջ: Այդ մասին հետաքրքրվողը կարող ե տեղեկանալ 1918 թ. Բագվի պարբերական մամուլից: Հայտնի յե մասնավորապես այն միջադեպը, յերբ Զառափյանը մի քանի զինված ժափախավոր դաշնակցականների հետ ներս ե խուժում «Բագվա Բանվոր» թերթի խմբագրատունը՝ մեծամասնական հրապարակախոս Արսեն Ամիրյանին ծեծելու համար և տպարանական բանվորների միջոցով դուրս ե վճնդվում տպարանից: Այդ մասին արձանագրված է «Բագվա Բանվոր» որաթերթի եջերում («Եակ. Պածուայ» 1918 թ.): Ահա հենց դրա համար ել մենք ամենայն վճռականությամբ հայտարարել եինք, վոր դաշնակցական կառավարությունը դիտավորությամբ Մոսկվա յեր ուղարկել բացառապես նրանց, վորոնք հայտնի յեն յե-

ղել վորպես խորհրդային կառավարության անհաշտ հակառակորդներ... Այլ խոսքով, վաղորոք արգեն դաշնակցական կառավարությունը վորոշում եր հանել՝ վարել լոկ ծեփական բանակցություններ և վոչ մի պարագայում համաձայնության չգալ խորհրդային կառավարության հետ:

Այժմ անցնենք «ճամբորդությանը»:

Այդ ել վորոշ նշանակություն ունի: Դաշնակցական կառավարությունից ավելի ուշ դուրս եր յեկել Թիֆլիսից քեմալական պատվիրակությունը և կարողացել եր 6 որվա ընթացքում հանել Մոսկվա:

Դաշնակցական պատվիրակության ճանապարհ յեկելուց մի քանի որ առաջ դուրս եր յեկել միենույն Թիֆլիսից մենշեվիկների պատվիրակը և այդ մեկ պատվիրակը նույնպիս կարտացել եր Մոսկվա հանել 6 որվա ընթացքում... Իսկ դաշնակցական պատվիրակությունը, չգիտենք ինչու, այդ միենույն ճանապարհը կարողանում ե կարել 26 որվա ընթացքում: Յեկ այդ չնայած նրան, վոր խորհրդային կառավարությունը հեռագրական առանձին կարգավրությամբ պարտագրել եր առանձին արագընթաց գնացքով ճանապարհել Հայաստանի պատվիրակներին:

Ինչումն ե խնդիրը:

Անշուշտ պատճառները շատ են:

Զառափյանը կանգնում ե Վլադիկավկազում իր «կորած կնոջը» գտնելու համար: Մնացած պատվիրակներն ել սպասում են նրան 10—12 որ Վլադիկավկազում: Այդպես եր բացատրում Մոսկվայում ինքը Զառափյանը և նրա հետ միասին «պատվիրակությունն» իր ուշացըումը:

Հ. Տերտերյանը այցելում և Նոր-Նախիջևանում իր ազգականներին։ Զար լեզուների ասելով՝ նա միքանի որ ուշանում է, վորպեսզի կարողանա «պարենավորում», «փախլավա», «սուջուխ» և այլ նման բաներ տանել սոված Մոսկվա։ Նրա ընկերներն ել սպասում են նրան, վորովհետեւ խորապես համոզված եյին, վորբայլելիյան Մոսկվայում բան չեն գտնի ուտելու։

Յեվ ահա այդպես ել ճանապարհորդում և այդ որիգինալ պատվիրակությունը։

Զավեշտական ե, անհավատալի յի այս բոլորը, բայց և այնպես փաստ ե դա, «Նայիրյան դիվանագիտությանը» հատուկ ակնհայտնի փաստ։

Անշուշտ այդ բոլորը չեր լինի, յեթե միայն պատվիրակությունն ուղարկելու ուժեղ համոզումով և նպատակ ունենար իրապես «համաձայնության» գալու Մոսկվայի հետ։ Յեթե այդ ցանկությունը լիներ, վոչ Զառաֆյանը կը վագեր իր անհայտ կնոջ յետեից և վոչ ել Տերտերյանը կը զրադիմի սուջուխի և փախլավայի պատրաստությամբ…

Սակայն հենց այդ համոզումն եր բացակայում։

Պատվիրակությունն սկզբից արդեն վորոշել եր ծգծգել բանակցությունները, ժամանակ շահել յեվ վորքան կարելի յի դանդաղ շարժվել մինչ այն մոմենտը, յերբ «քարեսիրու» Անգլիան կարող կը լիներ վորեն վճռական պատասխան տալ Հայաստանի աղերսագին դիմումներին։

Իսկ ինչո՞ւ յեր այդպես անում դաշնակցական կառավարությունը… Կանգ առնենք մի փոքր ել այդ կողմի վրա։

ՆՈՅԵՄԱՆԵՐԻ 29-ը ՅԵՎ. ԴԵԿԵՄԲԵՐԻ 2-ը

(Փաստեր և եջեր անցյալից)

Դաշնակցականներից շատերն աշխատում են ներկայումս ապացուցել վոր նրանք յերբեք թշնամական դիրք չեն ունեցել Խորհրդային հանրապետության նկատմամբ, և վոր այդ փաստի ամենանկատելի նշաններից մեկը պիտի համարվի դեկտեմբեր 2-ին կայացած «համաձայնությունը» մեծամասնականների և դաշնակցականների միջև։

Յես ավելորդ չեմ համարում կանգ առնել մի փոքր ավելի յերկար այդ «պատմության» վրա։ Լավ թե վատ, կովկասյան ժողովուրդների պատմության մեջ այդ եջը գրավում է առանձին տեղ թեկուզ հենց նրանով, վոր ամենացայտուն կերպով բնորոշում է նացիոնալիզմի յերկերսանի բնույթը։

1.

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՏՐԱՏԵԳԻԱՆ 1920-ին

Ինչպես ասացի, դաշնակցականների կողմից Մոսկվա ուղարկված «խաղաղափրական» պատգամավորությունը գիտավորությամբ դանդաղ կերպով եր առաջ շարժվում, վորպեսզի հարավորություն տա դաշնակցական կառավարիչներին ավելի «աշող» պայմաններ գուրս կորզել Հայաստանին «հովանավորող» իմպերիալիստաներից։

Այդպիսով դաշնակցական կառավարության պատվիրակությունը հետապնդել և զուտ ստրատեգիքական նպատակներ: Դաշնակցությունը ցանկացել է խարել «Խորհրդային հանրապետության» վարիչներին, ժամանակ շահել և ծածկել իր իսկական և ավանդություրիստական ձեռնարկությունները:

Ամենքի համար պարզ է, վոր յերբ մեկը «խաղաղափառության» անունից հայտարարություններ և անում, նա պետք է ամենից առաջ նկատելի յերաշխիքներ տա հենց այդ ուղղությամբ: Ներկա պարագայում պատահում է նակառակը:

Դաշնակցական պատվիրակությունը Մոսկվա յև ուղարկվում, իսկ դաշնակցական կառավարությունը գրեթե անմիջապես հենց դրանից հետո իր սեփական ինիցիատիվով պատերազմ և սկսում մի կողմից քիչ-մալական թյուրքիայի, իսկ մյուս կողմից ել Աղըլբեյջանի գեմ: Առաջին պատերազմը նա «արդարացնում» և Ոլթիի ածխաճանքերի գրավման անհրաժեշտությամբ, իսկ յերկրորդի դեմ ել կովում և Ղարաբաղի ազատագրման՝ նպատակով: Այդպես ել պարզ ասում է Վրացյանը, կարծես թե անպատճառ ամեն մեկը, վոր ցանկանում և ածուխ ձեռք բերել, պետք և անխուսափելիորեն պատերազմի դիմել:

Յերկու այդ դեպքերի առանձին բնույթը ավելի ևս պարզվում է, յերբ մենք հաշվի յենք առնում այն, վոր դաշնակցականների յետե կանգնած եր այն ժամանակ անգլիական իմպերիալիզմը, վորն իր յերկու այդ ձեռնարկություններով մի կողմից հրահրում եր պատերազմը Հայաստանի և հարեան ժողովուրդների միջև, իսկ մյուս կողմից ել նոր բարդություններ:

Եր ստեղծում Բագվում իմբրված Կարմիր բանակի համար:

Հայ անաբույս և խելառ ազգայնականներն իրենց «ազգային քաղաքականությունը» վարում եյին փաստորեն անգլիական զինվորական շտաբից թելագրված հրահանգների համաձայն և տգիտորեն յերևակայում եյին, թե «գրկում» են հայ ժողովուրդը այդպիսի ձեռնարկներով:

Սակայն հետեանքները յեկան պարզելու ձշմարտությունը:

Յերկու ֆրոնտների վրա յել Դաշնակցությունը պարտվում և ջախջախվում և չարաչար կերպով: Յեզ յերբ այդպիսի ջարդված վիճակում դիմում և ոգնության համար Թիֆլիսում գտնվող անգլիական գնդապետ Ստոկմանը, ստանում և վերջինից ամենասար պատասխան: Ստոկմանը ինչպես հայտնի յի, առաջարկում է հայերին «սեփական միջոցներով» իրենց ճարը տեսնել:

Միմիայն մի անգամ են դաշնակցականներին ոգնության գալիս անգլիացիները: Դա լինում է մայիսյան դեպքերի ժամանակ: Յերբ անգլիական իմպերիալիզմը տեսնում է և համոզվում, վոր դաշնակցականները իրոք կոտորում են հեղափոխականներին, նա զգացված իր արկելյան լակելյների յեռանդից՝ 40,000 հրացան և հատկացնում Հայաստանին: Ըստ յերեսութիւն անգլիական կառավարության այդ «Չնորթը» չափազանց մեծ տպագրություն և թողել դաշնակցականների վրա, վորովհետև մինչև այժմ ել բոստոնարևնակ Զիլինգարովը առանձին «ախ»-ով և հիշում այդ հրացանների մասին և նույնիսկ հանգիմանում և

«Ընկերներին» նրա համար, վոր նրանք չեն կարուցացել ժամանակին գնահատել իմպերիալիզմի բարյացակամ վերաբերմունքը:

Ինչեւցեւ: Փաստն այն է, վոր Հայաստանին դեպի կուվ և պատերազմ հրահրող Անգլիան կտրական կերպով մի կողմն է քաշվում և կարծես դրանով արդեն թելադրում ե նրան «խելքի գալ»:

Ի՞նչ է պատահում դրանից հետո:

Հետեւնք փաստերին:

2.

ՈԼԹԻԻ ԱԾՈՒԽԻ ՅԵՎ ԽԱՂԱՂԱՍԻՐԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ոլթիի «հարձակումը», ինչպես ասացինք, կազմակերպում և ճիշտ «բանակցությունների» ընթացքում: Ամենքին հայտնի յեր այն, վոր գրեթե միաժամանակ դաշնակցական դելեզացիայի հետ Մոսկվա յեր ուղարկվել նաև քեմալական դելեզացիան և վոր Հայաստանի հետագա վիճակը կախված եր նրանից, թե վորքան շուտ կը կարողանան Հայաստանը և Թյուրքիան վորոշ համաձայնության գալ Խորհրդային Ռուսիայի միջնորդությամբ: Ակներեւ և այն, վոր յեթե դաշնակցականներն իր ժամանակ ընդունակ լինելին հասկանալու իրերի իսկական դրությունը, չեր լինի վոչ «Ոլթի» բանագրավումը, վոչ Հարաբաղի աղեռը և վոչ ել Հայաստանի հետագա ավերը: Սակայն, յեթե նրանք ընդունակ լինելին հասկանալու այդ, ինարկե, նրանք չելին լինի և հայ բուրքուազիայի իղեղողները:

Վողջ խնդիրը հենց դրանումն է:

Ոլթիի «հարձակումը» շացնում և վոգեորում ե դաշնակցականներին: «Հառաջ»-ը մի քանի յերկարաշունչ հոդվածներ և նվիրում Ոլթիի «հարստությունների» և առանձնապես ածխանքերի նկարագրությանը: Մի քանի ընկերներ զանազան դիտողություններ են առում, իսկ կառավարությունը հիացած անսպասելի «հաղթանակից»՝ հուր և կրակ և նետում «թուլամորթ» հակառակորդի հասցեյին:

Յեկ ահա ձիշտ այդ, որերին, 1920 թ.՝ հունիսի 24-ին, Թուրքիայի Մեծ Ազգային ժողովի արտաքին գործերի կոմիսար Յեքիր Սամին դիմում և Հայաստանի կառավարության արտաքին գործ նախարարության առանձին հեռագրով, ուր կանգնելով Ոլթիի ֆրոնտի շրջանում կատարվող հարձակումների վրա՝ առաջարկում ե կանգնեցնել արշավանքը: «Մի քանի որից ի վեր Ոլթիի խալամ ժողովրդի հանդեպ Զեր կանոնավոր զորամասերի կողմից շարունակվող պատերազմական գործողությունների մասին մեր արեելյան ճակատի հրամանատար փաշայի կողմից յերեք որ առաջ Զեր զինվորական ուժերի հրամանատարության տրված բարեկամական ծանուցագիրը, պատերազմական գործողությունները անմիջապես զադարեցնելու մասին, մինչև այժմ առանց պատասխանի յե մնացել և ընդհակառակն յերեկվանից ի վեր Ոլթիի վրա հարձակումը ավելի շատացած և սաստկացած է: Մեր ազգը իր ամբողջ ուժով փափագում և բարեկամական հարաբերություններ պահել հայ ցեղի հետ, հայկական շահերը թյուրքականի հետ անհամապատասխան չեն, ընդհանապահկն՝ կարելի յե համաձայնեցնել և ավելի սերտ

դարձնել»: Ապա դառնալով անգլիացիների նենու և յերկերսանի քաղաքականությանը, Բեքիր Սամին ավելացնում է. «Զեր պատգամավորությունը Մուկվայում ուուս սովետական կառավարության հետ բանակցություններ ե վարում, մենք ել ուուս սովետական իշխանության հետ բաղարական հարաբերությունների ծեռնարկած լիներով՝ խաղաղորեն պատերազմին վերջ տալու կաշխատենք միասնաբար, ուստի Զեր հարձակումը բացարձակապես զարմանալի յե և ցավալի մի յերեվուլթ»: (Յերկու այդ պարբերություններն ել քաղում ենք այն վագերագրից, վորդում և դաշնակցական կառավարության նախկին դիվանի գործերում):

1920 թվի հունիսի 8-ին միհնույն Բեքիր Սամին դիմում և նոր գրությամբ Հայաստանի կառավարության: Այս անգամ հիշելով հուլիս 2-ին կատարված հարձակման գեղքը, նա ժխտում է այն, վորդում և դաշնակցական կառավարության մուտքաման ազգաբնակության խնդրանոք» (այդպես եր հիմնավորել իր արշավը դաշնակցական կառավարությունը) և ավելացնում՝ «Խնչպես վորդ առաջին գրությամբ ել հայտնել եմ, մեր կառավարությունը և թուրք ազգը հայ կառավարության և հայ ժողովրդին թշնամի չեն և ցանկանում են գտնել մի կետ փոխադարձ շահերը ապահովելու համար»: Ապա հիշելով Բերստ-Լիտովսկի և Բաթումի պայմանագրերը, Բեքիր Սամին նորից առաջարկում է «զորամասերը յետ քաշել» (քաղաքածք միհնույն դիվանից):

Այդ գիտումատելիական գրությանը Հայաստանի կառավարության անունից 1920 թ. հունիսի 28-ին պա-

տասխանում և Հայաստանի կառավարության «արտաքին գործերի քարտուղար Տեր-Հակոբյանը» (գրություն № 4515): Այդ գրության մեջ շեշտվում է նախ այն, վորդ Հայաստանի կառավարությունը «չի ճանաչում այդ պայմանագրերը», վորովհետև Բերստ-Լիտովսկի պայմանագրիրը «չի սոսորագրվել Հայաստանի կառավարության կողմից», իսկ «Բաթումի դաշնագիրը յերկու կողմերի պարագենտներից չի հաստատված» և «վոչ մի իրավական ուժ չի կարող ունենալ Հայաստանի համար»: Ապա Տեր-Հակոբյանը ավելացնում է՝ «Հենված յուրաքանչյուր ազգի այս որինագոր իրավունքների վրա, հայ ազգը բնակաբար չի կարող հրաժարվել Տաճկաստանի հայկական նահանգների վրա ունեցած իր անվիճակի իրավունքներից, վորոնց սահմանները համաձայն դաշնակից պետությանց կողմից այժմ Տաճկաստանին հանձնված հաշտության դաշնագրի պիտի վորոշվեն Գերագույն Իրավախորհրդի Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի կողմից»:

Խոսքը, ինչպես տեսնում ենք, վիւսոնյան ծրագրի մասին և, վորդ վրա և հենվելով՝ հիմնավորում է Հայաստանի կառավարության արտաքին գործերի քարտուղարը «Ոլթիի բոհնագրավումը»:

Մենք բերում ենք վագերագրերն իրենց իսկությամբ: Ամենեին նպատակ չունենք վորեն լուսաբանություն տալու: Մեզ համար ակներեւ և այն, վորդ յերկու կողմերի հիմնագորումներն ել բավական իսխուտ են և առաջգական:

Սակայն մի բան կը կամենայինք շեշտել: Այդ տյա և, վորդ դաշնակցական կառավարությունը բավա-

կան յերկար ժամանակ վոչինչ չեր ձեռնարկել վիլսոնյան Հայաստանի իրականացման համար—համենայն դեպս նա բավական մեծ համբերությամբ բավարպվել և գիվանագիտական ձեռնարկություններով մինչեմեկ փորոշ մոմենտը—մինչև այս մոմենտը, յերբ կարուկ հրահանգ և ստացվել ուղղմական զորդողությունների անհրաժեշտական մասին Անսահակու.

Յեկ իր այդ ձեռնարկությունը նաև սկսում է հա-
կառակորդին խարեւու նպատակով գրեթե միաժա-
մանակ «խաղաղասիրական» բանակցությունների հետ:
Դա չափազանց պարզ էր բոլոր այն ուժերի համար,
վորոնք այս կամ այն չափով գործ ունելին չայտ-
առնել հանրապետության հետ:

Ինչով եր բացառքվում այդ բախոր:

Անշուշտ միմիայն նըանով, զոր գաշնակցական
կառավարությունը իր բոլոր հույսերը կապուժ եր
իմպերիալիզմի հաղթանակի հետ:

Նա սկզբից մինչեւ վերջ պաշտպանում էր իմպերիալիզմի քաղաքականությունը Մոռավոր Արևելքում և փոչ մի կերպ չեր ցանկանում գիթ ամենաչին կետում համաձայնության զալ Խորհրդային իշխանության հետ:

Դրանով ել բացատրվում եր, անշուշտ, դաշնակցական կառավարության արտասովոր սահմանադարձակությունը Հայաստանում, նրա արյունաբրու վարքը, նրա վայրենի գործելակերպը գյուղացիական մասսաների նկատմամբ, բոնի միջոցները կոմմունիստաների և հեղափոխականների հանդեպ։ Ծառ հեռուն չգնալու համար բավական ե հիշել միմիայն այն, վոր Ոճանջանյանի կառավարությունը Հայաստանի հեղափոխական

շարժումը պիտառելու համար զուրս և հանում դադարացնողի կերպով բանափառ Սլանվերդյանին և մյուս կոմմունիստներին, սպանել և տալլս նըստց ճանապարհին և ապա ցիսիկարար հայտնում Զիշերինին, վոր իրեն անհայտ և ուր են կորել կոմմունիստները։ Բանգիտներին և միծ ճանապարհների վրա զործող թալանչի ավագակներին հատուկ այդ քաղաքականությամբ հայ բուժուազիայի ռազմական կազմակերպությունը ցանքականում եր մի կրզմից խեղդել հեղափոխական շարժումը յերկրում, իսկ մյուս կողմից ել նոր «Հնորհներ» սուսանալ Լոնզոնի և Պարեզի բանկիր-վամալիբներից։

Այս, վոր այդ բոլորը այդպես եր - ցայց և տակ լիս շատ պարզ և այն որերի դաշնակցական մամուլը:

Նույնիսկ ամենածանր որևէին և յերկրի որած
ական քայլայման պահուն դաշնակցական կառավա-
րությունը չի կորցնում իր հավաքը զեզի իմպերիա-
վոզբք, մի հրաժարվում իր խելակորույն քաղաքակա-
նությունից և առանձին համառությունը շարունակում
և ընթանալ իր մշտական ավանայուրիստական ու-
ղիով։ «Հառաջ»-ում 1920-ին գետիդված դաշնակցական
գործիչների տեղեկագրերը բոլորն ել կարծեն դիտա-
վորյալ կերպով ամենամռայլ գույներով եյին նկարա-
դրում Խորհրդային Հանրապետության կացությունը
և միաժամանակ մթնեցրած այդ պատկերներին հակա-
զըռում եյին անդադար հաղթանակով և առաջ շարժվող
«լուսավոր» իմպերիալիզմի իդեալականացրած նկարը։
Դա քաղաքական ագիտացիայի յևլ քարոյական ազդե-
ցության մի միջոց եր, զոր առանց հետեանքի չեր

մնում հենց նրա համար, վոր ամեն որ և ամեն ժամ կրկնվում էր միորինակ համառությամբ: Ամերիկական զգաստների մեջ պարուրված և ամերիկական «քաղցր» կաթը խմող հայ քաղքենի տրադիցիսն ինտելիգենտը առանց այն ել մեծ համարում ուներ «Յելլուպայի» ուժի մասին:

Իսկ ժողովուրդը—զյուզացի և սանչպար ժողովուրդը կուրորեն հաստում եր «ազգի պատիչներին»: Մենք կը բերենք այստեղ միայն մեկ դոկումենտ, վորը շատ սլատկերավոր կերպով պարզում է հենց այդ քաղքենի-ազգայնական մտայնությունը: Դա Զիլինգարյանի այն ձառն է, վոր արտասանել և նա Յերմանում կայացած հանդիսավոր հասարակական մի նիստում հոկտեմբերի 1-ին (1920 թիվ):

«Պարզ և, ասում ե Զիլինգարյանը, վոր Արեկելքին վերաբերող բոլոր խնդիրներում թելազրող պիտի լինի Անգլիան: Մասնավորապես Անգլիկովիասի խնդիրները անխուսափելիորեն պիտի լուծվեն անգլիական թելազրությամբ»: Ապա լառնալով Հայաստանի հարաբերություններին քեմալական կառավարության հետ՝ Զիլինգարյանը, ապավիճելով միենույն Անգլիային, սկսում է. «Մեր զեմ յեկող ուժերից Քեմալը ջախջախում եռ քայլայվում—նա (այսինքն քեմալական կառավարությունը) նուսահատական փորձերով ե զբաղված միայն: Մեծ պետությունների մեջ Հայաստանի զոյությամբ իրոք անմիջապես շահազրզոված է միայն Անգլիան» (տես «Հայաց» 1920 թ. № 222): Կարծում եմ զբանով ել կարելի յե վերջացնել: Ամեն ինչ պարզ է: Սիմեյոն Վրացյանը և նրա ընկերությունը ներկայում աշխատում են ամեն կերպ

համոզել վոր գործել են միանգամայն անկախ անգլիական իմպերիալիզմից: Զիլինգարյանի ձառը, այդ ձառի առանձին բովանդակությունը, ձառի ընդգծումը դաշնակցական կառավարության պաշտոնական որդանի մեջ ցույց է տալիս հակառակը:

Հենց այդ արտասովոր վերաբերմունքն ել դեպի Անգլիայի ուժը և «բարյացակամ» զիրքը Հայաստանի հանգեղ պայմանավորել ե դաշնակցական կառավարության ընդհանուր զորձելսկերպը և թե առանձին քայլերը «խաղաղասիրական» բանակցությունների ընթացքում:

3.

Խ Ո Ւ Ճ Ա Պ

Այդ խուճապը սկսվում է հենց առաջին անաջողություններից հետո: Յերբ ակներեն և զառնում արգեն քեմալականների հաղթանակը, իրենք՝ զլուխը կորցրած զաշնակցականները սկսում են հերձե վազել մեկ կետից գեպի մյուսը: Թիֆլիսում Բեկլազյանը որ ու զիշեր մաշում և անգլիական զնդապետ Ստոկսի զաները և մերթ ընդ մերթ «գլխավումատիքական» զբություններով տեղեկացնում իր Յերևանի ընկերներին «միջազգային» զբության մասին:

Ահարոնյանը միենալոյնը անում և Պարիզում: Իսկ կառավարությունն համակված Զիլինգարյանի ոսկաթիմիստական արամազրությամբ Անգլիայի նկատմամբ՝ զիտավորությամբ ձգձգում եր իր բանակցությունները Խորհրդային իշխանության հետ: Դաշնակցական կառավարության պատվիրակությունը փախարեն զորձի զբաղված եր Սոսկվայում փողոցները չափչփելով և զա-

տարկ ժամավաճառությամբ։ Խորհրդացին կառավարությունը ուղարկում է Հայաստան իր պաշտոնական ներկայացուցչին, Լեգրանին, և առաջարկում որ առաջ վերջ տալ պատերազմական գործողություններին և Խորհրդային իշխանության միջնորդությամբ լուծել վիճակի խնդիրները Թյուրքիայի և Աղբբեյջանի հետ։

Ինչպես հայտնի յի, Լեգրանը բավական յերկար ժամանակ մնում է Թիֆլիսում շնորհիվ այն բանի, վոր դաշնակցական կառավարությունը հրաժարվում եր նրան «ընդունել»։

Հոկտեմբերի 11-ին միայն Լեգրանը մտնում է Յերևան։ Նրան ներկայանում է բանակցությունների համար Մուկվա ուղարկված միենույն գելեգացիան։ Դրանով գաշնակցական կառավարությունը նորից հաստատում եր միայն այն, վոր ինը տրամադրիր չն լուրջ բովանդակություն մտցնել բանակցությունների մեջ։ Յեթե այդպես չլիներ, թեկուզ հենց հասարակ գիվանդիտական տակտի համար նա պետք է ընտրեր վոչ թե Շանթի և Զառաֆյանի նման անհարակ մարդկանց, այլ խաղաղության իսկական կողմանակիցներին։

Լեգրանի առաջարկը Խորհրդային իշխանության միջնորդության մասին ընդունվում է բավական անորոշ կերպով։ Իսկ վերջնական պատասխանը գաշնակցականների կողմից նորից հետաձգվում է, վորից ոդարվում է, ի հարկե, քեմալական բանակը, վորը աստիճանաբար առաջ և շարժվում։ Ներկայումն գաշնակցականներից շատերը ասարակում են, թե ինչու Խորհրդային իշխանությունը իր ժամանակ ոգնության ձեռք չի մնինել Հայաստանին։

Պատասխանը շատ պարզ է։

Հայաստանը իմպերիալիզմին եր ծառայում և սպասավորում այդ ժամանակի Զիլինգարյանի ձարից և գաշնակցականների ընդհանուր գործելակերպից շատ վորոշ յերկում եր, վոր նրանք նկատում են Հայաստանը վորպես անզիւդական ամբոց և հենց մինույն Անդիայի ոգնությամբ ել մտադրվում են ամրացնել անզիւդական իմպերիալիզմի գերիշխանությունը, նոր հարգածներ հասցնել Խորհրդային իշխանության և, վերահաստատելով մուսավաթականների իշխանությունը Աղբբեյջանում, իսկեւ նավթային աղբյուրները Խորհրդային հանրապետության աշխատավորությունից։

Սյուպիսի պարագաներում Խորհրդային Ռուսիային մնում եր միայն մեկ յելք, — համոզել դաշնակցականներին հրաժարվել իրենց խելառ քաղաքականությունից և հրաժարվել արևելյան ժանդարմի դերից։

Դժվար չեր այդ առաջարկը ամրացնել վորոշ ուղմական ուժենքի ներգործոն աղբեցությամբ։

Բայց Խորհրդային իշխանությունը այդ միջոցին չեր գիմում վոչ թե նրա համար, վոր չեր կարող այլ բացառապես քաղաքական վորոշ նկատառումով, նա չեր ցանկանում աեղիք տալ Հայաստանի աշխատավորության կարծելու, վոր ինքը ցանկանում և վորեւ կերպ «առվեատականացման» յենթարկել Հայաստանը։

Դաշնակցական մամուն իր բարոյալքվող շարքերը ամրացնելու և իր գիրքը ամրացնելու նպատակով անզաղար զանազան պրովակացիաներ եր անում այդ մասին։ Յեկ հենց դրա համար ել Խորհրդային

կառավարությունը գործադրում եր բավական յերկար ժամանակ խոսքի և համոզումի մեթոդը այնաեղ, ուր անհրաժեշտ եր (ինչպես ցույց են տալիս հետագա անցքերը) ուժ և ՚ըսնություն։ Գուցե և Հայաստանի աշխատավորությունը շահվեր այդ «ըսնությունից» և ժամանակին գործադրած այդ ուժի շնորհիվ չկորցներ ավելորդ վայրեր և ավելորդ մարդկային զոհեր։

Այսոր կարելի յե այդ ասել քանի գոր պատմության տրամարանությունը ինքը ապացուցել է դաշնակցական գործիչների կատարյալ ապիկարությունը և հանցանքը հայ ժողովրդի հանդեպ։

4.

ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-ը ՅԵՎ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-ը

Դաշնակցականներին հայանի յեր և այն, վոր քեմալականները բանակցություններ են վարում և Սնգլիայի հետ։ Յեվ ի հարկե, գրանովել բացարփում եր նրանց չափազանց այլամերժ գիրքը Խորհրդային կառավարության նկատմամբ։ Վոչ մի պարունակություն և ժողովրդական գոհերի վոչ մեկ կորուստ նրանց չեր հուսահատեցնում, գորովհետև կառավարությունը ամբողջովին կանգնած եր անզինական որիյինտացիայի վրա և խորապես համոզված եր նրանում, վոր Անդրիան այս կամ այն կերպ պիտի վարձարի իր սպասավորին և պարտադրե Թյուրքիային բավարի դաշնակցականների բոլոր պահանջները։

Ահա այդ հավասն ել ներշնչում և Հայաստանի վարիչներին այն արտասալոր բթամտությունը, վոր

այսոր ել, տարիներ անց, տարորինակ և անբացատրելի յե թվում միանդամայն։

Դաշնակցական կառավարությունը, վորը հրաժարվում եր առաջ նույնիսկ հասարակ պատասխան տալ Թյուրքիային, հետագայում արդին այնքան նեռուն և զնում, վոր ոկտում ե խոսել միանդամայն նոր լեզվով։

Ակեքսանդրապոլու ուղարկված գաշնակցական պատվիրակության նախագահ Խատիսովը քայլ առ քայլ հրաժարվում և Հայաստանի նոր և նոր վայրերից և վերջում, մի շարք խայտառակ դիմումներից և խնդրագրերից հետո, ստորագրում է գեկտեմբերի 2-ին Ակեքսանդրապոլի տիրահանչակ գաշնակցիը։

Մինչ այդ պատահնում են հետևյալ դեպքերը։

Նոյեմբերի 29-ին Մոսկվայում լուր է ստացվում Սարիղամիշի անկման մասին։ Ավելի ևս շուտ այդ լուրը հայտնի յե զտոնում շնորհիվ դաշնակցական գորամասերի կատարյալ լքման և խուճապային վախուստի։

Զափաղանց ակների եր արդեն, վոր գաշնակցական գործելակերպ մահ և բերում Հայաստանի աշխատավորությանը։

Իր ժամանակ նախազգալով այդ տիսուր հեռանը կարը, Հայաստանի զյուղացիները պարզել եյին մայիսի մեջին ապստամբության զրոցը։ Այդ պատամբության հնչումից հետո առժամանակ դադար եր առել հեղափոխական շարժումը։

Սակայն որ ըստ որե ոուր կերպարանք ընդունող տնտեսական տագնապը և գաշնակցականների պարտությունը բոլոր ֆրոնտներում նորից բորբոքում են կրակը։

Ալիքսանդրապոլ ուղարկված Խորհրդային կառավարության ներկայացուցիչ Մղիվանին ևս սահմ և ընդունվում դաշնակցականների կողմից: Հաղթողների առաջ սովացող Խատիսովը հրաժարվում է Մղիվանու միջնորդությունից և նույնիսկ հեռազրում և Յերևանում գանգող կառավարության նախագահին, վոր Մղիվանու միստիստ նա (Խատիսովը) համարում է վասարեր և իր կողմից առաջարկում և վորքան կարելի յե ձգձգել բանակցությունները Լեզրանի հետ: Յես բերում եմ այսեղ դաշնակցական կառավարության գործերի մեջ գոնվող Խատիսովի իսկական հեռազրի բառացի արտահայտությունը: Ահա այդ հեռագիրը, վոր թվադրված և 1920 թ. սեպտեմբերի 29.— «Սահմանների կոնտրաստաջարկը տաճիկների, ասված և այդ հեռագրում, կըստանանք վաղը. մինչև այդ Լեզրանի հետ բանակցությունները, մեր կարծիքով, պետք է հետաձգել: Զեզոք զննան աշխատեցեք մեր արդմինիստրացիայի միջնորդությունը: Կարա-Բեքիրը բացատրում է, վոր զակատարվում և իր կամքի հակառակ միծամանականների ձեռքով: Մղիվանիի դերը այստեղ վնասակար և մեր շահների համար, նա գործում և բացառապես կուսակցական Հայաստանը սովետացնելու նպատակով: Պարզեց, վոր վրացիք դադանի դաշն ունեն տաճիկների հետ: Կարա-Բեքիրը հավատացնում է, վոր Բագու չի գնալու: 29 սեպտեմբերի 1921 թ., ժամը 20-ին: № 25. Խատիսյան»:

Այսեղ ամեն բան ասված և պարզ: Յեզ այդ բոլորը այս կամ այն կերպ հասնում եր Հայաստանի աշխատավորության ականջին:

Յեզ ի հարկե, զրա համար ել բնական և դասնում միանգամայն այդ աշխատավորության ավելի ակտիվ տարրերի ապատամբությունը յերկիրը անդունդի մեջ նետող վարիչների դեմ:

Նոյեմբերին արդեն խանում և ապատամբների բանակն այնքան, վոր դաշնակցական կառավարությունը պարտվում է Դիլիջանի և հարակից շրջաններում: Ապատամբ զյուղացիների ձեռներեցությամբ կազմակերպվում և առաջին Խորհրդային կառավարությունը, վոր կոչվում եր «Հայաստանի Ռազմա-Հեղափոխական կոմիտե»:

Նոյեմբերի 29-ին հրատարակված դեկրետով նոր եշխանությունը տապալված և հայտարարում դաշնակցական կառավարությունը և կոչ և անում ժողովրդական մասաներին ամրակուռ շարքերով խմբվել բանվորա-զյուղացիական կառավարության շուրջը:

Դա լինում և նոյեմբերի 29-ին:

Դա լինում և, վորպես բնահնդամեշատ հետևանք բոլոր նախորդ գետքերի: Յեզ, ի հարկե, նա նույնքան պարզ և հասկանալի յեր և Յերևանում գոնվող վարչեների համար: Խորհրդային խմբանության ուղիւն նույն նոյեմբերի 29-ին հաղորդել եր Հայաստանի խորհրդայնացման լուրը:

Իսկ Հայաստանի ժողովրդական մասաները ավելի ևս շուտ տեղեկացել եյին այդ մասին առանց հեռազրի հենց տեղում կենդանի սուրհանդակներից: Դրանով ել բացատրվում եր անշուշտ Յերևանի մեջ գործող գտշնակցականների «նոր» լեզուն լեզրանի հանդես:

Առաջ

Դրված լինելով փաստերի առաջ, դրանք զգում եցին, վոր վոչ մի կերպ չեն կարող ազատել իրենց իշխանությունը և վոր Խորհրդադին կառավարության ներմուտքը ժամերի հարց և։ Ահա հենց այդ պարագաների ազդեցությամբ ել բացատրվում է դաշնակցական նորածե դիմերսիայի մշակումը։

Լեզրանին և Յերեանի մեծամասնականներին խարեւու համար զաշնակցականները «Ճախ» անունն են տալիս Վրացյանին, Դրոյին և մի քանի ուրիշ «Գործիչների» և ապա այդ ձեռվ կնքված ել «Համաձայնություն են կնքում» նոր «Էլուալիցիոն կառավարության» մասին։

Դա լինում է զեկանմբերի 2-ին, այսինքն այն ժամանակը, յերբ արգեն ուշ եր, յերբ վոչ մեկ ուժ իրավունք չուներ խոսելու Հայաստանի աշխատավորության անունից, և յերբ յերկրի միակ իրավագործառավարությունը գալիս եր Յերեանի վրա ապստամբ մասսաների գլուխ անցած։

Դեկտեմբերի 2-ը— գա զաշնակցական կուսակցության հուսահատական այն կետերեց մեկն և, վորով նա ձգուում և Փալսիֆիկացիայի յենթարկել պատմությունը և կենդանության կանչել Դաշնակցության քայլքայվող շարքերը։

Միհնույն զեկանմբերի 2-ին Ալեքսանդրապոլից Խատիսյանը գիմում և Դրոյ—Վրացյանին և հարցնում է նրանց հետագա իր անելիքի մասին։ Ավելի քան պարզ եր զբա պատասխանը, քանի վոր նոյեմբերի 29-ին կազմված կառավարության հաստատումից հետո արգեն Խատիսյանը պիտի գաղարեցրած համարեր իր

լիազորությունները և Խորհրդային կառավարությանը զերապահներ հետագա բանակցությունները։

Դա գիտեր և Խատիսյանը և Դրոյ—Վրացյանը։

Սակայն Խատիսյանը շարունակում եր իր բանակցությունները, իսկ Դրոյ—Վրացյանն ել հաստատում են ինքնակոչ Ալեքսովի զիվանագետների հանցավոր քայլերը և նույնիսկ դեկտեմբերի 2-ին խրախուսում են նրանց գործել հին, տապալված և ապորինի կառավարության հրահանգների համաձայն։ Այդ խոսակցությունը յերկու դաշնակցական շեֆերի մեջ արձանագրված և առանձին հեռագրի մեջ և գտնվում է գարձյալ զաշնակցական կառավարության միենույն դիմանի գործերում։

Յեկ այզպիս ել, Խատիսյանի ձեռներեցությամբ և Դրոյ—Վրացյանի հավանությամբ, զեկանմբերի 2-ին ստորագրվում և Ալեքսանդրապոլի պայմանագիրը այսինչ Յերեանում ել արգեն զեկտեմբերի 1-ին Դրոյ—Վրացյանի ձեռներեցությամբ ստորագրվել եր մեկ ուրիշ պայմանագիր։

Այդ վերջին պայմանագրի ստորագրության փառարգեն բացասում եր և Վրացյանի և Խատիսյանի իրավունքները—վորեւ նոր ակտ ստորագրելու Հայաստանի անունից։

Վարվելով այզպիս և մեկ ձեռքով ստորագրելով պայմանագիրը Լեզրանի հետ, իսկ մեկ քանի ժամ հետո մյուս ձեռքով ստորագրելով Ալեքսանդրապոլի պայմանագիրը—մեռնող Դաշնակցությունը ցանկանում եր վերջին հարվածը տալ հեղափոխությանը, ծանր զրության մեջ դնել նոր կառավարությունը, «հավատարիմ» մնալ մինչև վերջ իմեպերիալիզմին և մեկ վեր-

ջին հենակետ ևս ունենալ դալիք ավանտյուրաների
համար:

Սակայն նոյեմբերի 29-ին արթնացած ժողովը գրգական մասսաները վերջ են տալիս այդ հույսերին և ամրացնելով հեղափոխական կարգերը՝ կառուցում են նոր Հայաստանի հիմնաշենքը:

«ԴԱՅՆԱԿՑՈՒԹՈՒՆԸ» ՅԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Վերջերս կովկասահայ բուրժուազիայի ուղմական կազմակերպությունն սկսել ե զբաղվել արևելյան ժողովուրդների ազատագրական շարժման քննությամբ և վերլուծությամբ: «Դաշնակցությունը» կարծես մի վորոշ փորձ և անում վերաքննության յենթարկելու իր հին տեսակետը Վերագնահատական այդ աշխատանքի պրոցեսում նա միաժամանակ ճգնում է ապացուցել՝ վոր մեծամասնականների վերաբերմունքը հիմնովին սխալ լինելով հանդերձ, միանգամայն վնասարեր և հայ ժողովրդական մասսաների և առանձնապես կորստաբեր աշխատավորական այն զանգվածների համար, վորոնք գտնվում են արևելյան գաղութներում: Այս հանգամանքը դրդում է ինձ քիչ ավելի մանրամասն կանգ տռնել շոշափած հարցի վրա: Վորովհետև վորքան ել «ակադեմիական» և յերեսում առաջին հայացքից այս հարցը, այնուամենայնիվ նա այժմեյական խոշորագույն նշանակություն ունի: Նրա լուծման այս կամ այն յեղանակից կախված ե նաև հայ աշխատավորության հետազա վարքագիծը Մոտավոր Արևելքի յերկրներում:

1.

Յերկար և ՌԱՐ ԳԱՅՆԱԿՑԱԿԱՆ ՆՈՐ «ՓԻԼԻՍՈՓԱ-
ՅՈՒԹՑԱՆ» ՄԱՍԻՆ

Առաջինը դաշնակցականների մեջ վրացյանն է, վոր փորձում ե յուրողինակ ձևով հիմնավորել Դաշնակցության «Նոր» գործելակերպը: Պատասխանելով մեծամասնականների քննադատությանը, նա պնդում է, վոր դաշնակցականները յերբեք դեմ չեն յեղել արևելյան ժողովուրդների ազատազրական շարժմանը և վոր նրանց քարոզած գործելակերպն ե յեղել թե անցյալում և թե այժմ կատարյալ «Հեղոքություն» կովոյ յերկու կողմերի նկատմամբ: Իրավացի գանելով արեվելյան ժողովուրդների «դատը», Դաշնակցությունը քարոզում է այնուամենայնիվ «Հեղոքություն», վորովինեան չի ցանկանում զայլացնել արևմտյան իմպերիալիստներին և ավելորդ արկածախնդրության մեջ նետել արտասահմանյան հայ աշխատավորությունը: Վրացյանը հավատացնում է, վոր արդեն «Հեղոք» այդ գործելակերպով հայ աշխատավորությունը վորոշ կերպով կը ցուցաբերի ի՞ր համակրական վերաբերմունքը դեպի արևելյան ժողովուրդների դատը և լիովին կապահվի Արևելքում ապրող աշխատավորական դանդաղաձների խաղաղ գոյավիճակը:

Ապա, հիմնվելով հենց այդ կետի վրա, Ս. Վրացյանը կոչ է անում արևմտահայերին լինել զգույշ և վոչ մի պարագայում չենթարկվել հայ բայլշեկների «ազգակործան» պրոպագանդային:

Լրացնելով Սիմ. Վրացյանի խոսքերը, դաշնակցական «Հայրենիք»-ի մի ուրիշ հրապարակախոս շեշ-

տում է, վոր «մեր (այսինքն՝ արտասահմանյան ազգայնականների) մամուլը և մարմինները, բացառությամբ բոլշևիկների, կը հանձնարարեն չեղոքություն», վորովհետև... «մենք ժամանակավոր հյուրեր յենք, ոտար տարր, հետևաբար վոչ սպարտականություն, վոչ ալ իրավունք ունինք խառնվելու անոնց ներքին գործերուն և պայքարներուն» («Հայրենիք» 1925, № 4147 թ. «Արևելքի զարթոնքը և մեր գիրքը»): «Զեղոքությունը» անհրաժեշտ և նաև այն պատճառով, վոր «մենք շահմ» ալ չունինք նման միջամտութենեմը, վոչ իսկ մեկ հատիկ ավելորդ կյանք գոհելու ոտար պայքարի մը համար, վորչափ և անոր հանգելով համարկական վերաբերմունք ունինք մենք»: Դրա համար կրական վերաբերմունք համար կերպություն-ի «զգույշ» սարատեղը կարծում է, վոր ել «Հայրենիք»-ի «զգույշ» սարատեղը կարծում է, վոր «պարզ արկածախնդրութենե տարբեր բնույթ մը չունի հայ բոլշևիկներու անտեղի միջամտությունն այդ պայքարներու մեջ»: «Անոնք, շարունակում է միենույն հոդվածագիրը, կը մոռանան, վոր ոտար պիտության մը գործականներու դերը ստանձնելով յելքրոպական գաղութներու մեջ, մեծապես կը մնասնեն հայ աշխատավորության շահերուն»:

Մի ուրիշ տեղ «Հայրենիք»-ն ավելի կարուկ կերպով արտահայտվելով ասում է, վոր «արտասահմանի հայ հասարակությունը պարտավոր և միացնել իր ուժերը վերջ դնելու համար բոլշևիկներու զավադական գործունեյության, վոր կը սպառնա վտանգել դրական գործունեյության, վոր կը սպառնա վտանգել հայ տարագիր զանգվածներու դիրքն ոտար յերկրներու մեջ: Պարսկաստանի, Սյուրիայի, Հունաստանի, Ռումանիայի, Պուլկարիայի և Ֆրանսիայի մեջ մասնագրապես հայ բոլշևիկներու զրգուիչ ու խառնակիչ վորապես հայ բոլշևիկներու զրգուիչ ու խառնակիչ

գործերը միշտ ավելի կը գրավեն ուեզական կառավա-
թյուններու ուշադրությունը, տեղի տալով ձերբակա-
լություններու և հալածանքներու, վորոնց հետևանքով
հաճախ կը տուժեն վոչ միայն Մոսկվայի «կարմիր»
հայ գործակալները, այլ և առհասարակ բոլոր հայերը»
(«Հայրենիք» № 4144). Կարծում եմ, բավական են
ցիտատները: Դիտավորությամբ յես բնորոշում եմ
գաշնալյան «իմաստախրությունը» հենց իրենց,
դաշնակցական հրապարակախոսների խոսքերով, վոր-
պեալի նրանց վողջ տեսակետը լինի ավելի պարզ ու
փորոշ:

Ինչպիս տեսնում ենք բերված կտորներից, իր
ավանտցուրիպմով և անսպառ «քյալլագյողություն-
ներով» (ինչպիս կամեր զարարացի շինականը) «Դաշ-
նակցությունը» դասել ե մի ակնթարթ, հենց այսոր
և հենց այժմ «զգույշ», «խելոք» և «չեղոք»... Կարծես
կախարդական գովազանի հարվածով նա «խելօպացել»
և այնքան, վոր «զգուշության» քարող ե կարգում և
նույնիսկ անորոշ կերպով ինչ վոր ակնարկներ և նե-
տում «Դաշնակցության» «համակրական վերաբեր-
մունքի» մասին արեւելյան ժողովուրդների հանդեպ:
Առաջին հարցը, վոր ինքնըստինքյան ծագում ե, այդ
այն ե, թե վերքան մոտ ե իրականության վերջին
հայտարարությունը և վարչափ իրավացի յե այն, վոր
«Դաշնակցության» կողմից առաջադրված «չեղոքու-
թյան» պլատֆորմն իրապես ցուցանիշ ե «չեղոքու-
թյան», այլ վոչ քողարկված քաղաքական դավանա-
նության:

Այս ե վողջ խնդիրը: Կանգ առնենք թե առաջին
և թե յերկրորդ կետի վրա:

2.

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ ԱՆՑՅԱԼԻ ՄԱՍԻՆ

Սկսենք գրանից, վորովհետեւ «պատմությունը»
ինչպես միշտ, այս մասգամ ել շատ բան և պարզում և
այսպիս թե այնպես տալիս ե այն բանալին, վորով
մենք կարող ենք լուծել այսորվա պրոբլեմները:

Այդ «պատմությունը» համենայն դեպք մի բան
ապացուցում է շատ պարզ և փորոշ: Նա հաստատում
է նախ և առաջ ամենքին հայտնի այն փասով, վոր
և մի հինգ տարի առաջ արեկլյան բոլոր հայ գա-
ղութներն յեզել են բացառապես հայ ազգայնական-
ների պղեցության ներքո և բոլշևիկական պրոպա-
գանդային նպաստով վոչ մեկ հատված կամ նույնիսկ
անհատ չեն ունեցել իրենց միջալայրում: Բոլշևիկներն
հանդիս են յեկել միմիայն վերջին յերեք տարվա ըն-
թացքում և այն ել մի քանի վայրերում: Այսոր ել
նրանք, շնորհիվ իմպերիալիստական վոստիկանության
հալածանքների և հայ մասուցերական-Փաշիստների,
կազմակերպությունիվ գաղտնի կազմակերպու-
թյուններում փոքրաթիվ գաղտնի կազմակերպու-

թյուններ են հանդիսանում: Այս գրանի այն դեպքերի
համար, վորոնք մինչեւ այժմ կատարվել են Արևելքում,
պատահանատու յեն հայկական այն կուսակցու-
թյունները, վորոնք իշխել յեվ գործել են զաղութա-
նայ միջավայրում, բոլոր—բացի բոլշևիկներից: Յեկ
գրանց մեջ խոշորագույն դերը պատկանում է դաշ-
նակցականներին և ուսմկավարներին, վորովհետեւ գա-
ղութահայ աշխատավորությունը միշտ դեկավար-

վել և առաջին հերթին հենց այդ կուսակցությունների հրահանգներով և ցուցումներով:

Այժմ հարց և ծագում—ի՞նչ են արել այդ կուսակցությունները, ի՞նչ են քարոզել և ի՞նչպես են ամրացրել հայ և արևելյան ժողովուրդների համաշխատակցությունը:

Այդ հարցերի պատճենանը տալու համար շատ բան պետք չե: Թերթեցեք միայն հայ ազգայնականների թերթերը և գրականությունը, և դուք կը նկատեք մի եյական գիծ՝ ավելի քան վորոշ: Այդ՝ արհամարհական առանձին վերաբերմունքն ե դեպի արևելյան ժողովուրդները և ստորաքարշ քաղաքականությունը կապիտալիստական Արևմուտքի նկատմամբ: Արևելյան բոլոր ժողովուրդներն ել մեր ազգայնական գրականության մեջ նկարվել են արհամարհական ներկերով—ճիշտ այնպես, ինչպես նկարում ե իմպերիալիստական մամուլը «վայրենի» աֆրիկացիների կամ ասիացիների կյանքը:

Յեկ այդ մտայնությունը տարերայնորեն իշխել է վողջ հայ իրականության մեջ և պայմանավորել է նաև հայ աշխատավորության վորոշ զանգվածների դիրքն ու քաղաքականությունը արևելյան ժողովուրդների հանդեպ: «Յեվրոպասիրությունը» և այդ յեվրոպասիրության հետ կապված՝ կապիտալիստական Արևմուտքի վողջակուրումը և ջատագովությունը յեղել է հայ հասարակության գլխավոր և միակ ուղին ժողովոր անցյալում: Դրա արձագանքը կարելի յի տեսնել թե մեր գրականության և թե հրապարակախոսության մեջ: Նույնիսկ այնպիսի մի դիսցիլին, վորպիսին է «հայագիտթյունը», չի կարողացել ազատ

մնալ համատարած «ազգային» այդ մտայնության ազգեցությունից: Հայ «հայագիտաների» բոլոր աշխատակիցներն ել միշտ ձգտել են հաստատել ու ապացուածել հայերի կապն Արևմուտքի ու Յեվրոպայի հետ և ցեղ Արևմուտքայն Յեվրոպային ծառայող՝ «հայուշացն» ցիվիլիզատորական միասին Արևելքում: Առանձին այն թշնամանքը, վոր մինչև այժմ ել ցուցադրվում է հայկական ծագում ունեցող բոլոր հայագիտների կողմից պրոֆ. Մատի հարեթական թեորիայի գետների, թերեւս տրամփցիոն «յեվրոպասիրության» նկատմամբ, թերեւս տրամփցիոն «յեվրոպասիրության» արդյունքներից մեկն է*): Հայ քաղքենի մտավորականի համար չափազանց ծանր և հաշտվել այն մտքի հետ, վոր նրա լեզուն «արիական-հնդկուպական», և «առաջին կարգի» լեզվական խմբից կարվում և և «առաջին կարգի» լեզվական խմբից կարվում և և «առաջին կարգի» (նրա կարծիքով) ժողովագլուխությունների հետ:

Միւնույն այդ կույր յեվրոպասիրության արգյունք և այն, վոր մենք մինչև այժմ ել շատ քիչ գանութ մեր հարևան արևելյան ժողովուրդների ենք ծանոթ մեր հարևան արևելյան ժողովուրդների ենք հայնքին և մշակույթին: Յեվրոպական վոչ միայն կյանքին և յերկրորդական և յերրորդական առաջնակարգ, այլև յերկրորդական և յերրորդական հեղինակներ հայտնի յեն մեզ բազմաթիվ թարգմանութեղիների լեզվական խմբակցությունների հետ:

*.) ԾԱՆՈՒԹ. Այդ հանգամանքը ընդգծել և և ինքը պրոֆ. Մատի: «Հարեթական կովկասում, առում և նա, հարեթողդիան ընդհարվել և կովկասոյն կուլտուրական ազգությունների նախկին ընդհարվել հետո: Դրա համար ել Մատի այս ասպարիզում ել և և մասնակիության գլխավոր նորից թարմ աշխարհայեցուանիրաժշամ, ենապուլիազմի ու առեղծագործական ելեմնատը ծնդին, դությունը, ենապուլիազմի ու առեղծագործական ելեմնատը ծնդին, պաղպահին «վարեց» («Известия Академии Матер. Культуры», Ленинград, 1925 թ., III, Էջ 287:)

թյուններով, այն ինչ նորագույն արար, տաճկական, թյուրք կամ պարսկական զբականությունից մեղ մոտ վոչինչ չի թարգմանված: Արևելքի մասին մենք մինչև այժմ ել դատում ենք Հաֆըզի, Սաազի, Ոմար Խայամի, Ռումիի յերկերի հիման վրա, այն ինչ նոր Արեւելքը^{*)} մինչև այժմ ել մնում ե կատարելապես անհայտ և անծանոթ: Յեւ չեմ խոսում այստեղ այն բացահայտ թրքատյացության կամ ավելի ճիշտ՝ մուսուլմանատյացության մասին, վոր սնուցվել և տարածվել ե մեզ մոտ հայ ազգայնականների և հոգեռականների ջանքերով: Ազգային ատելության իմաստասիրության և կրօնառքրիստոնեյական «կուլտուրայի» գաղափարները բացարձակ կերպով նետվում եյին ժողովրդական ամենալայն մասսաների մեջ և իրենց վարսակիչ ազդեցությամբ խոր արմատներ ձգում գաղութահայ միջավայրում: Յեվ այսպես տասնյակ տարիների ընթացքում պատրաստվում ու մշակվում ե իմպերիալիզմին ծառայող վորոշ ուժ Մոտավոր Արևելքում:

^{*)} „Նույն ագիտությունը, նկատել ե 1904-ին զեռ Չուկանյանը, պահած հնդկ և ոսմանյան գրականության մասին. հակառակ վոր վեց դարերի ի վեր-Հայոց ամենասուվար զանգվածը Ռումանցոց հետ անմիջական ամենորյա հարաբերության մեջ կը գտնվի: Պոլսա լրագիրներու մեջ քանի մը, շատ սակավաթիվ, հոգվածների զատ, վոչ մեկ ճիզած և այդ գրականությունը մեզի ճանչներու և այդ հոգվածներն ալ, ընդհանրապես տաճկաբան դասատուներու կողմէն գրված, անխնամ ու անձաշակ կերպով կատարած են այդ գործը: Արևմտյան Հայոց գրականության լուրջ ներկայացուցիչներն և վոչ մեկը զրադաշ և այդ նյութով:“ Ա. Զուլանյան, „Արևելքը և հայ միտքը“, (“Անահիտ”, 1904, № 9-20, էջ 137):

Մեծ դեր են կատարել այս ուղղությամբ և յեպ-րոպական միսիոնարները: Դրանց պլուղագանդը մի կողմից, մյուս կողմից՝ միսիոնարների ջանքերով կազ-կողմից ել դատում ենք Հաֆըզի, Սաազի, Ոմար Խայամի, Ռումիի յերկերի հիման վրա, այն ինչ նոր Արեւելքը^{*)} մինչև այժմ ել մնում ե կատարելապես անհայտ և անծանոթ: Յեւ չեմ խոսում այստեղ այն բացահայտ թրքատյացության մասին, վոր սնուցվել և տարածվել են հայ աշխատավորության յերիտասարդ սերունդն Արևելքից և արևելյան ժողովուրդներից և ստեղծել հայերից իմպերիալիզմի քաղաքականությանը ծառայող հավատարիմակ ուժում:

Ամեններն կարիք չկա ապացուցելու, վոր նույն-իսկ այժմ, և հենց այսոր, հայ ազգայնական վողջ մամուլը շարունակում ե ընթանալ իր մշտական այդ ուղիով: Եյդ չեզոք ուղի չե այնքան, վորքան համակ-ված և բավական վորոշ բուրժուածացիոնալիստա-կան աշխարհայեցողությամբ, այնքան, վորքան ներ-կայացնում և իրենից իմպերիալիզմի և իմպերիա-կայացնում «քաղաքականության» ջատագովում և ուղ-լիստական «քաղաքականության» ջատագովում և արևելյան ժողոված և իր մի ծայրով գաղութահային և արևելյան ժողովուրդների գեմ:

«Չեզոք» չե այդ դիրքն այժմ: Ավելի ևս «չեզոք» չի յեղել նա անցյալում, այն որերին, յերբ հայերը անգլիական, ֆրանսիական և ամերիկյան հայերն անգլիական համազգեստաներով պայցքարել են զենքով զինվորական համազգեստաներով պայցքարել են զենքով և իմպերիալիստական գեներալների զեկավարությամբ և իմպերիալիստական գեներալների զեկավարությամբ և իմպերիալիզմի հաղթանակի համար Մո-կոիվ են մեկ իմպերիալիզմի հաղթանակի համար Արևելքում:

Մեզ հայտնի յեն անցյալի այդ բավական վորոշ «ազգային» քաղաքականության հետեւանքները: Ավել-վել ու քանդվել են տաճկահայ վիլայեթները, քանդ-վել ու դատարկվել ե Կիլիկիան: Կոտորածի յեւ մատ-նըվել հայ աշխատավորությունն առնեն տեղ, ուր վորք

և զրել իմպերիալիզմը... Կոտորվել և տեղացիների, արևելցիների, պայքարողների կողմից հենց իր «դավաճանության» համար, իմպերիալիզմին ծառայելու և սպասավորելու համար:

Մի քանի ամիս առաջ միենույնը կրկնվել և Սիրիայում, ուր հեղափոխական զրուցները մի քանի տասնյակ տիսմար դաշնակցականների պատճառով նետվել են խաղաղ հայ աշխատավորության վրա... Այսուելև Դաշնակցության՝ «յեվրոպական» ու «արևմբայան» քաղաքականությունն ամենածանր կացություն և ստեղծել աշխատավորության համար... Յեվայունական նույնիսկ նրան, վոր իրենք հեղափոխական զրուցներն ամեն կերպ աշխատել են հակաքրիստոնեական բնույթ չտալ իրենց պայքարին և կազմակերպվուծ հունի մեջ մացնել ժողովրդական մասսաների տարերային շարժումը:

3.

ՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԵՐՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

Դրան պիտի ավելացնել մի ուրիշ փոչ պակաս կարևոր հանգամանք և:

Խնդիրը նրանումն ե, վոր Մոտավոր Արևելքում հայ ժողովուրդը ստեղծել ե նաև կապիտալիզմի, առանձնապես առևտրական կապիտալիզմի կրողներին: Արևելքի գրեթե բոլոր խոշոր առևտրական վայրերումն ել վաճառականությունը կենարոնացած եր գլխավորապես հայերի ձեռքում: Դրանք եյին սովորաբար կատարում յեվրոպական խոշոր ընկերությունների կոմմիվոյաժողուների գերը Արևելքում: Խոշոր հայ

վաճառականները փոխադրում եյին դեպի Արևելքում արևելյան ապրանքները, բերքերը, գործվածքները, իսկ փոխարեն՝ ներմուծում եյին Յեվրոպայից համապատասխան ապրանքներ և մանվածեղին: Յեվ քանի ուժեղանում և արևելյան գաղութների կախումը միջազգային շուկայից, քանի ավելի տարածվում և արևմբայան ակցիոններական ընկերությունների ազգեցությունը արևելյան գաղութների վրա ու ամրանում է կապիտալի դիրքը Մոտավոր Արևելքում—այնքան ել ավելի զորանում և հայ վաճառականական գաղութների ուժը...

Համեմատ դրան տնտեսական հին ձեերի քայրայման պրոցեսում բոլոր այն տարրերը, վորոնք ձմլվում են և տրորվում կապիտալիստական Մոլոխի վոտքերի տակ, ընականաբար կապիտալիզմի դեմ ուղղված անեծքները և բոլոքը ուղղում են այդ կապիտալիզմը կրողներին հայ վաճառականների դեմ: Իսկ լայն մասսաների գիտակցության մեջ շնորհիվ կրօնա-ազգայնական հոսանքների պրոպագանդի—այդ հայ վաճառականությունը նույնանում և հաճախ հայ ժողովրդի հետ: Յեվ անհիծելով հայ առևտրականներ կապիտալիզմի հետ գրենց անեծքների մի վորոշ մասն ուղղում եյին և այն ժողովրդի դեմ, վորը կովան և աջակից եր հանդիսանում հայ վաճառականության համար և չեր ցուցադրում ավելի վորոշ իր առանձին վաճառական դասից տարրերվող քաղաքականությունը: Յեվ քանի վոր հայ ժողովրդը հայ վաճառականության հետ եր, նա անհրաժեշտաբար պատասխանավորթյան եր կանչվում նույն այդ վաճառականության կապիտալիստական գործառնությունների

և զիշատիչ վաշխառվական խարդախությունների ու սպեկուլացիայի համար:

Ամեն տեղ,ուր վոտք ե կոխում սոցիալական այդ խմբակցությունը, ամեն տեղ,ուր մտնում է հայ վաճառականությունը, իրերի անհրաժեշտ զարգացման պրոցեսում առեղջկում ե պատրաստ հող հայտացության համար: Յեկ քանի ուժեղանում և կապիտալիզմի դարձացումը Արևելքում, վորքան ավելի լայնանում և քայլքայլող մանր տնտեսության ներկայացուցիչների կոնտինգենտը—այնքան ավելի սուր և լայն ընույթ և ստանում և «հայտաբացությունը»:

Իսկ կազմմակերպված ու գորոշ ծրագրային սկզբ-
րունքներով ամփափված հոսանք և գառնում հայա-
տյացությունն այն որից, յերբ արևելյան ժողովուրդ-
ներն իրենք լրինց միջից դուրս են բերում և ստեղ-
ծում լրինց սեփական վաճառականությունը:

Այդ վաճառականությունն ել հենց միաժամանակ ազգային շարժման հետ իր ժամկիքներն ե սրում հայ վաճառականության գեմ և կազմակերպական բնույթ տալիս իր մրցակիցների գեմ ուղղված Արեվելքի տարերային շարժմանը: Ահա հենց գրահամար ել մենք կարող ենք ասել վորոշակի, վոր գոչ մի ձևական «չեղոքություն» չի կարող մեղմացնել հայերի կացությունը, քանի վոր այդ «չեղոքությունը» բացակայում և ամենազլվագոր ասպարեզում—տնտեսական բնակավառում: Իրավես «չեղոք» լինելու համար հայերը Սրբելքում պիտի զբաղվեն բացառապես գործակութական և յերկրագործական աշխատանքով: Իսկ այդ նրանք չեն կարող անել, վորովհետեւ հայ ժողովրդի մի վորոշ կոնստինգենտը «վաճառական» և վոր-

սկսած այդպիսին կապված եւ արհմայան կապիտալիզմի
հետ: Այդ չեն կալող անել նրանք նաև այն պատճա-
ռով, վոր կապիտալիզմի գարգացումը բնաւնիքաժեշտ
մի պրոցես լինելով՝ վորոշ շերտավորման և յենթար-
կում նաև հայ հաստրակությանը և հենց այդ շերտա-
վորման պրոցեսում ստեղծում հայ առետրա-կապիտա-
լիստական խմբակներ: Դրանումն եւ վորջ խնդիրը:
Խոկ այդ պրոցեսի հետեւանքով հայ բուրժուացիան,
կապված լինելով իր շահերով արհմայան կապիտա-
լիզմի հաղթանակի հետ, բնականաբար ամեն կերպ
աշխատում եւ ույժ տալ խմբերի լիզմի ամրացմանը և
առաջնապահանը Մոտավոր Արևելքում:

Այս ինչ վոր մենք շեշտեցինք կերպ, տնտեսական ուրույն պայմանների հոգի վրա ստեղծված իդեոլոգիական անձրաժեշտ վերնաշենքն է: Դաշնակցության և հայ ազգայնական բոլոր մյուս կուսակցությունների բացասական-թշնամական քաղաքականությունների ժողովուրդների նկատմամբ և հայությունը Արևիլքի ժողովուրդների նկատմամբ և հայկական նախալիքատների լակիյական գործելակերպը իմպերիալիզմի և իմպերիալիստական դիվանագիտության նկատմամբ՝ գաղութահայ բուրժուազիայի շահերի և զասակարգային իդեոլոգիայի հարազատ արտահայտությունն է:

Յեկ հետց նրան համար, պոր այդ բգուղովան
մինչև այժմ յեղել ե տիրական և վարակել ե իր բա-
ցիներով հայ ժողովրդի խոշոր մեծամասնությունը,
ուսարների աշքում նա համարվել է «Հայկական» և
«Համազգային»: Աւ զրա համար ել ամեն անզամ, յերբ
վառքի յե կանգնել Արենելքի ժողովրդական տարերքը
միջազգային իմպերիալիզմի դեմ՝ նա նետվել ե վոչ

միայն անմիջապես արևմտյան իմպերիալիզմի, այլ միաժամանակ նուև այդ իմպերիալիզմին ծառայող ու սպասավորող քրիստոնյա մասսաների գեմ:

Այդպես և յեղել միշտ Յեղիպտոսում ժողովրդական բոլոր շարժումների ժամանակ: Այսպես կընի բոլոր այն վայրերում, ուր հայ ժողովուրդը կը շարունակի հետեւ հայ բոլորուազիայի և Դաշնակցության գործելակերպին:

Սիրիայի ղեղփերը լավագույն կերպով ապացուցում են այդ: Քանի դաշնակցականները թույլ ելին այնուղի հայ և տեղական ժողովրդի հարաբերությունները, չնայած նույնիսկ առողյա տնտեսական ներհակություններին, շարունակում եյին մնալ նորմալ և խաղաղ: Բայց այն որից, յերբ Սիրիա վոտք և կրիում ավանդուրիստական-ազգայնական կուսակցությունը, Սիրիան դասում և հայ ժողովրդի միամիտ խմբակների ինելակորույս յելույթների թատերաբեմ և միաժամանակ իբրև հետեւանք այդ քաղաքականության—հայկական կոտորածների նորագույն կրկնու:

Սուտ են ասում գաշնակցականները, յերբ ասում են, թե նրանք «չեղոքության» կողմանկիցներ են:

Դա ասվում և մասսաներին խարելու համար:

Դաշնակցությունը ցանկանում է գրանով աղաւել իր ոձիքը պատասխանատվությունից Սիրիայում ստեղծված վերջին կոտորածների համար:

Սուտ և զա, վորովհետև «չեղոքություն» չի կարող լինել այնակող, ուր մեկը կատարում և գիշատիչ մարդագելի դերը, իսկ մյուսը ծվատվում և, այնուղի, ուր իմպերիալիզմի այերովլանները ավերում են զյու-

ղերը և ավանները, ուազմական խմբերը կոտորում են խաղաղ շինականներին, իսկ միենույն այդ շինականների հյուրասիրությունը վայելող յեկվոր ընակչությունը սեղմվում և գիշատիչների կողքին և փարիսեցիարար շինականներին, թե ինքը չեղոք եւ: Վոչ վոք չի հավատար գոչում, թե ինքը չեղոք եւ: Վոչ վոք չի հավատա այդպիսի «չեղոքության»—մանավանդ, յերբ այդ «չեղոքության» շնորհիվ միենույն յեկվորների ավագանուական դասը ուռնանում և ուժեղանում և շահագործող արեկեցիների կողքին, յերբ հայ յեպիսկոպոսն ու վարդապետը զբախանունվում են ֆրանսիական արքատի և զորավարի հետ, յերբ հայ մատղերականները ֆրանսիական զինազգեստը հագին ոգնում են ոտարեկրյա բռնականներին:

Արտասահմանյան հայ լրագրներից մենք գիտենք արգեն, վոր զբուզների ձեռքն ընկած ֆրանսիական գերիներից 500 հոգի հայեր ելին: Մի ուրիշ լրագրից հայտնի յե մեկ նաև այն, վոր մի քանի հայ սպաններ առանձին պատվանշաններ են ստացել աջող «գործողությունների» համար սիրիական ֆրոնտում: Այդ լուրերից վոչ մեկը մինչև այժմ չի հերքվել գաշնակցականների կողմից: Զի ժխտվել նաև հայանի լուրը այն մասին, վոր դաշնակցականների առաջարկով և տեղական հայ սեազգեստ եղմիածնական ներկայացուցչի ձեռներեցությամբ ցրվել և Բեյրութում գումարված առկուսակցական այն ժողովը, վոր հավաքվել եր այդպատճեն ընկ. Ալ, Մյասնիկյանի հիշատակը հարգելու համել ընկ. Յեկ այդ չնայած նույնիսկ նրան, վոր հիշյալ ժողովը վրապես միջազգայնականի հիշատակին նվիրված մի հավաքույթի կարող եր միայն փարատել հեղափած դրույների թերահրամաքատ վերաբերմունքը

դեպի հայերը և անհրաժեշտ կամուրջ հաստատել յերկու ժողովուրդների համագործակցության համար:

Բեյրութի առաջնորդը ախմարորին չի ըմբռնում այդ հասարակ ճշմարտությունը, գնում և զաշնակցականների յետից, խորացնում և վիճը հայ աշխատավորների և աշխատավոր զրույնների միջև, և զրա համար ել նա նույնչափ պատասխանատու յէ սիրիական գեղքերի մեջ, վորպիս և նրան ոգտագործող ավանդյուրիստ գաշնակցականները: Սիմ. Վրացյանի և ավելի մասն գաշնակցականների փարիսեցիությունը շատ լավ և մերկացնում Յեղիպոսի ռամկավարների որդան «Արևը» (1925 թ. № 2066, «Ինչու մեկ պարագայի և վոչ միշտ»), յերբ կատեգորիկ կերպով հրաժարվում և հավատ ընծայել գաշնակցականների խարուսիկ խոսքերին «չեղոքության մասին»: «Յեթե հիրավի, առում և «Արևը», պիտի հրաժարին անցյալի բոլոր արկածախնդրական ուղիներին և պիտի գատառաբանն այն բոլոր հախուռն ու անխորհուրդ գործերը, վորոնք հայ ժողովուրդը ստար մեքենայության գործիք ու գոհ ըրին և «Յնդանութային միս» դարձուցին անոնց շահերուն, յեթե ասիկա իրականություն և վոչ խարկանք, այդ պարագային պիտի սպասելինք վոչ միայն վորոշ ու մեկին հայտարարությանց, այլ նաև գործնական ապացույցներու»... Ապա դառնալով սիրիական գեղքերին, «Արևը» շեշտում և «Պիտի սպասելինք վոր մեր հակառակորդ կուսակցությունը հրապարակավ հայտարարեր թե Սուրիո իր ներկայացուցին այն հայտարարությունը թե հայ ժողովուրդը պիտի և պատրաստվի նոր զոհողությանց, նոր արյուն թափելու, պարզապես հիվանդ ուղեղի մը

արտահայտություններ են և վոչ մեկ կապ ունին կուսակցության քաղաքականության հետ...»: Մամկավարորդանի սպասումները միամիտ են չափազանց:

Գաշնակցությունն արդեն արել և իր հայտարարությունը Սիմ. Վրացյանի բերանով: Իր «չեղոքության» քաղաքականությամբ նա արդեն բավական վորոշ կերպով ասել և իր խոսքը: Դա միհուռյան և, ինչ վոր յեղել և անցյալում, միմիշայն ավելի հղկված և շպարզված, միմիշայն ծածկված «դիվանագիտական» վորոշ պարբերությունների մեջ:

Բայց վոչ վոքի չի կարող խարել հայ բուրժուազիայի ռազմական կազմակերպության ստրատեգիական նորագույն այդ մանյալը: Զափազանց արդեն վորոշ և այն կապը, վոր կա Թաշնակցության և Փրանսիական իմպերիալիզմի միջև: Վորոշ և զրա համար նաև այն, վոր «համազգային» կեղեր մեջ պարփակված գաշնակցական քաղաքականությունը շարունակում և մնալ գաղութային Արևելքում խմբված առևելություն և ապահովագույն հայ խմբակների սոցիալական ծրագիրը:

4.

Ի Ն Զ Ա Ն Ե Լ

Այդ ծրագրին, վորն իր եյտությամբ դաստկարգային և սկզբից մինչև վերջ, անհրաժեշտ և հակառակ բանվորների և զյուղացիների աշխատավորության ծրագրը:

Այլ խոսքով՝ նորից շեշտել այն, վոր չի յեղել չկա և չի կարող լինել «ազգային» կամ «համազգային» իդեալը նորից շեշտել, վոր այն բոլորը, ինչ վոր իդեալը նորից շեշտել:

մինչև այժմ քարողվել և առաջադրվել եւ «ազգային իդեալի» անունով, յեղել եւ տիրող տարրերի—հայ բուրժուազիայի շահերին համապատասխանող մի ծրագիր:

Հայ ժողովրդի աշխատավորական տարրերը շնորհիվ իրենց անգիտակցության, յետամասցության և միամտության—հավատ են ընծայել մինչև այժմ բուրժուազիայնական կուսակցություններին և հատարիմ կերպով կատարել են բոլոր այն առաջարկներն և «ազգային խորհուրդները», վոր հրահանգել են Դաշնակցությունը և Եջմիածինը...

Մինչև այժմ մեր աշխատավորությունը գնացել եւ «ազգային քաղաքականության» հենց այդ ուղիով: Բերլինի վեհաժողովը 6-րդ հոդված, Քրիստովոր Միքայելյան, Խրիմյան Հայրիկ, «Արյան ձայներ», Եջմիածին և կամավորական շարժում, կոփ բոլոր «անհավատների»—«թուրքերի» գեմ, «մաքրազործում», Մանթաշիկ և Մանթաշիկ Ֆիյերի ներքողներ, միստոնարական կուլտուրայի հիմնավորում և «վեց վիւայեթներ» Կիլիկիայի հետ միասին...

Այդ և յեղել այն ուղին, վորով գնացել են աշխատավորական խավերը և վորի համար զարնելով իրենց ճակատները պատմության անիմներին՝ տրուվել ու ջարդվել են այդ անիմների առաջ...

Տեղտեղ, Սիրիայում, գուցե և վորով չափով նաև Յեփապատում, շարունակվում եւ տակալին այդ պատմությունը: Յեկ մենք ամենեին ապահովված չենք նրանից, վոր վաղուց արգեն դատապարտված «ազգային քաղաքականության» այդ կրկնությունը չի բերի նորանոր չարիքներ հայ ժողովրդի այն չնչին

հատվածներին, վորոնք մնացել են հիշյալ յերկըւներում:

Դրա համար ել մենք նորից մեր պարտքն ենք համարում սթափման իրուք ասելու նրանց, վորոնք միամտություն կամ հիմարություն կունենան հավատալու այսուհետեւ ևս հայ ազգայնական կուսակցություններին:

Բավ եւ:

Կես դարուց ավելի հայ աշխատավորությունը գնացել և ձեր ուղիով և կոտորվել եւ:

Այժմ թույլ տվեք այդ ժողովրդին իրեն ընտրելու այն ուղին, վոր ավելի համապատասխանում են սրբ իրական շահերին: Այդ ուղին ընտրել և արդեն սրբ փորձերի հունով անցած գիտակցել եւ, թե ուր զան փորձերի հունով անցած գիտակցել եւ, նոյնեմբերի 29-ի ապատամեք ատենում զուք նրան, և նոյնեմբերի 29-ի ապատամեք բությամբ արտաքսել և ձեզ յերկրից: Յեկ հենց այդ բությամբ արտաքսել և ձեզ յերկրից: Յեկ հենց այդ որից և հայ ժողովրդի պատմության նոր շրջանը, որից և հայ ժողովրդի պատմության, միջազգային, յեղբայրական խաղաղ շինարարության, միջազգային, յեղբայրական լոկերակցության և համաշխատակցության շրջանը:

Դա յե միակ փրկարար ուղին: Յեկ իր այդ ներկային Հայաստանի աշխատավորությունը կարուներկային համար ձեռք-ձեռքի ուսւա պրոլատարիատի զայել և համեն ձեռք-ձեռքի ուսւա պրոլատարիատի համ մեկ հետ, միացած կովկասյան ժողովուրդների հետ մեկ կուռ բանակի մեջ ընդդեմ միջազգային գիշատիչ իմպերիալիզմի:

Միենայն զասակարգային այդ ուղին պիտի հայկագրի արևելյան գաղութներում ապրող հայ աշխատավորությունը վաղեմի «ազգային» և «յեփրոպասիրական» քաղաքականության:

Նոչ մեկ սժանդակություն Արևելքը հռշոտող արևմտյան իմպերիալիստներին: Վոչ մի համատ յեկեղեցական այն առաջնորդներին, վորոնք միացած Դաշնակցության հետ՝ խարում են աշխատավորներին և նոր հակառայ կոտորածների հող են պատրաստում Արևելքում:

Ու ավելի վորոշ քան յեղել և մինչև այժմ, պետք է կանգնի հայ աշխատավորությունը հեղափոխական արևելքցիների կողքին ընդդեմ իմպերիալիզմի:

Յերեք չպետք է մոռանալ այն, վոր իմպերիալիստների արտաքսումից հետո հաղթանակող Արևելքը կարտաքսե նաև իմպերիալիստներին սպասավորող բոլոր ուժերը:

Այդպես և յեղել Կիլիկիայում: Նույնը կրկնվել և Զմյուռնիայում:

Այդ «փորձը», դառն և մահաբեր փորձը միշտ պիտի ուղեցույց փարոս լինի հայ աշխատավորության արտասահմանյան այն զանդվածների համար, վորոնք ապրում են Արևելքում:

«Զեզոքությունը»—պատախան չե: «Զեզոքությունը»—դիմակ և և պատրվակ, վոր հնարավորություն և տալիս հայ բուրժուազիային անվթար կերպով տառջ տանելու իր քաղաքականությունը: Այդ բուրժուազիան չեզոք չե ամենաին, քանի նա մնում է կապիտալիզմի կրող և ներկայացուցիչ, քանի նա կրթնած իմպերիալիզմի ուժին՝ ոզնում է այդ միենույն իմպերիալիզմին ամրանալ Արևելքում: Դրա համար ել հայ աշխատավորությունը իր հերթին պիտի միանա Արևելքի աշխատավորությանը և նրա հետ միասին մի ընդհանուր բանակում կույի Արևելքի թև ոտարյերկրյա

և թև հայրենի բանակալների դեմ: Իր այդ պայքարով Դաշնակցության, հայ նացիոնալիզմի, հայ յեկեղեցականների, նրանց բոլորի դեմ, վորոնք ծառայում և սպասավորում են իմպերիալիզմին, նա կապացուցե Արևելքի մասսաներին գործով, վոր ինքը հակառակ և հայ բուրժուազիայի քաղաքականությանը և վոչ մեկ պարագայում չի կարող պատասխանատվության կանչվել այդ բուրժուազիայի կողմից ձեռնարկված քայլերի համար: Դրա համար ել մեծամասնականների առաջարկած ուղին հեղափոխական լինելով հանգերձ միակ այն ուղին և, վոր կապելով հայ աշխատավորներին Արևելքի հեղափոխական մասսաների հետ՝ ապահովում Արևելքին նրա ֆիզիքական գոյությունը գալիք հարեւ լիովին նոր արհավիրքների կրկնություններից:

Միաժամանակ նա հնարավորություն և տալիս արտասահմանյան աշխատավորությանը ազատվել թուարական-զաղթական վիճակից և կողք-կողքի ազատական-զաղթական վիճակից և կողք-կողքի ազատագրված մասսաների հետ՝ կոել նոր Արևելքի հասարակաշնորհը:

ՀԱՎԵԼՎԱՌ

ՄԻ ՔԱՆԻ ԿԱՐԵՎՈՐ
ՎԱՎԵՐԱԳՐԵՐ

ԲԵՔԻՐ ՍԱՄԻԻ ՀԵՇՎԻՒԻՐԸ
Յերեանի Հանրապետության Արտաքին Գործերի Նա-
խարարության:

Մեր կառավարությունը Հայաստանի կառավա-
րությունը հիմնվելուց ի վեր սրա հետ բարեկամական
հարաբերություններ պահպանել և և շարունակել ե-
րեն համար վարքագիծ ընտրել այդ: Նա այդ բանը
զործով ել ցուց ե տվել հակառակ Զեր շարունակա-
կան հարձակումներին: Զեր զրավման տակ յեղող
հողամասերի մեջ գտնվող, բայց իր ինքնուրույնու-
թյունը վորոշող և Միլի Շուրա կազմող իսլամ ազգա-
բնակության դեմ միշտ կրկնվող հարձակումների և
չարգերի Զեր քաղաքականության հանդեպ մեր կա-
վարությունը բավականացել է միայն բարեկամական
ծանուցազերով: Մի քանի որից ի վեր Ոլթիի իսլամ
ժողովրդի հանդեպ Զեր հանցավոր զորամասերի
կողմից շարունակվող պատերազմական գործողու-
թյունների մասին մեր Արեւլյան ճակատի Ն. Վ. Հրա-
մանուսար Փաշայի կողմից յերեք որ առաջ Զեր զին-
վորական ուժերի հրամանատարության արված բարե-
կամական ծանուցազերը պատերազմական գործողու-
թյունները անմիջապես դադարեցնելու մասին մինչև
այժմ առանց պատասխանի յե միացել և ընդհակառակն
յերեկանից ի վեր Ոլթիի վրա հարձակումը ավելի

շատացած և սաստկացած է: Մեր ազգը իր ամբողջ ուժով փափագում է բարեկամական հարաբերություններ պահել հայ ցեղի հետ. հայկական շահերը թուրքականի հետ անհամապատասխան չեն, ընդհակառակն կարելի յեւ համաձայնեցնել և ավելի սերտ դարձնել յեթե Դուք անկոմնակալորեն դատիք. կը հուսամ թե Դուք ևս կը հաստատեք, վոր ձեր բանած ընթացքը չի համապատասխանում Զեր ազգային խկական շահերին: Համոզված, վոր անզիւացիները մշտապես իրարու հետ ապրելու ստիպված յերկու հարեւան ցեղերը արյունահեղության մզելով են զբաղված, մենք Զեր կառավարության և ազգի համար բոլորովին վնասակար կը գանենք, վոր Զեր ազգը անզիւացիների ձեռքը խաղակիք գառնալով մեր կառավարության դեմ թշշնամության ձեռնարկե:

Զեր պատգամավորությունը Մոոկվայում ուսւ սովետական կառավարության հետ բանակցություններ ե վարում. մենք ել ուսւ սովետական իշխանության հետ քաղաքական հարաբերությունների ձեռնարկած լինելով՝ խաղաղորեն պատերազմին վերջ տալու կաշխատինք միամասքար, ուստի Զեր հարձակումը բացարձակապես զարմանալի և ցավալի մի յերեւլույթ ե:

Հարձակումների շարունակության ամբողջ պատասխանատվությունը թողնելով Հայկական կառավարության վրա, այս անզամ ալ թուրք ազգային կառավառության Արտօքին Գործերի Կոմիսարի հանգամանքով յես ևս ինպում եմ Զեր Գերազանցությունից տաւ հարկ յեղած անմիջական հրամանները Զեր զորա-

մասերին վերջ տալու համար թշնամական գործողություններին: Սպասելով ձեր պատասխանին ինպում եմ ընդունել խորին հարգանացս հավաստիքը:

24 հունիս 1920թ.
336

Թուրք Մեծ Ազգային Ժողովի Արտաքին Գործերի Կոմիսար Բեքիր Սամի:

Անզորայից հեռազրով ստացված խոկականի հետ ձիշտ և. 24 հունիսի 1930թ.:

(Արտագրված «Գործ Պետական Դիվանի» № 170, 1920թ. «Հայ Տաճկական պատերազմ 1920թ.»):

Ապերագիր № 2.

ՆԱԽԱՐԱՐ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ

Ալեքսանդրապոլից—Յրևան. 13—20.

Նախարարապետին:

Ի նկատի ունենալով ստեղծվուծ դրությունը, մենք այստեղ հայտնեցինք յոզովրդին, վոր համաձայնություն ունենք կնքած խորհրդային Ռուսաստանացարկանի հետ և կառավարությունը արդեն բանակցությունների մեջ ե մտել թյուրքական հրամանատարության հետ: Անմիջապես հալորդեցեք մեզ բանակցությունները վարող մարդկանց անունները: Այս գիշեր ձաները վարող մարդկանց անունները:

Նախարար Ղազարյան:

(«Գործ № 170»).

Ապելագիր № 3.

ԲԵԿՉԱԴՅԱՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ

Յերևան: Արտաքին Գործոց Նախարարին: Կնիք՝ «Արտաքին Գործերի Մինիստրություն»: Ստացված է 13 նոյեմբերի 1920 թ.: Մահը № 4786. Յերևան:

Յերեկ յերեկոյան կարսի անկման մասին հեռագիր ստանալուց հետո անմիջապես տեսնվեցի Ստոկսի հետ։ Նա պատասխանեց, վոր ըստ յերևութիւն Անտանտան կամ չի կարող, կամ ել չի ցանկանում մեզ ոգնել։ Ասաց, վոր մեր գրությունն անելանելի յեւ և մենք իրավունք ունենք համաձայնության գալու մեր հակառակորդների հետ։ Յերբ յես ընդգծեցի, վոր շնորհապարտ եմ այդ թեկուզ ուշացած, բայց անկեղծ պատասխանի համար, նա պատասխանեց, վոր չափազանց ցավում ե, սակայն այդ ե միակ յելքը։ Յեզրակացություններն արեք ինքներդ։ Այսոր կը տեսնվեմ մյուսների հետ։ Համար 490, նոյեմբեր 3.

Հայաստանի ներկայացուցիչ Բեկզադյան:

Ապերագիր № 2.

ՔՅԱԶԻՄ ԿԱՐԱ-ԲԵՔԻՐԻ ՀԵՌԱԳԻՐԸ

Արեւելյան ճակատի Հրամանատարության Սպայակույտ: Բ բաժանմունք: Արեւելյան ճակատի հրամանատար Քյազիմ Կարա-Բերիքի փաշալի կողմից: Բանակառական (Կառա). 6 նոյեմբերի 1921 թ.:

Ալեքսանդրապոլի Հայոց Արևմտյան Բանակի Սպայակուլության:

Յերկու կողմի բանակների հրամանատարությանց միջև աեղի ունեցող բանակցությանց արա-

գությունը ապահովելու և ժամանակ չկորցնելու
համար ինպրում եմ Արևելյան բանակների հրամանա-
տարության զրկվելիք զրությունները զրել թուրքե-
րեն լեզով։ Յեկ հայոց բանակում գտնված պաշտո-
նայաններից և սպաններից շատերը թուրքերեն զիտնա-
լուն համար կը հուսամ թե կարելի յէ այս ինպիրքիս
ընդունվիլ։ Յեթե կարելի չլինի այս, Արևելյան
բանակատեղիում հայերենը պետք յեղածին չտիով
թարգմանելու կարող թարգման չգտնվելուն պատ-
ճառով ինպրում եմ հիշյալ զրությունները զրել ֆրան-
սերեն և ընդունել հարգանքներս։ Արևելյան բանակ-
ների Սպայակույտի Նախագահ Գնդապետ Քյազիմ:

Վավերագիր № 5.

ԶԵՐԱԳԻՐԸ

Մուկուտա, Նոյեմբերի 11.

ի նկատի առնելով հայկական կառավարության
գիմումը Խորհրդային Ռուսաստանի միջնորդության
մասին Հայաստանի և Թյուրքիայի միջև, ի նկատի
առնելով այն, վոր թյուրք ազգային կառավարու-
թյունը համաձայն և այդ միջնորդությանը, Խոր-
հրդային կառավարությունը հաղորդում է Ձեզ, վոր իր
վրա յե վերցնում միջնորդությունը և այդ նպատակով
դեպի ուղարկան գործողությունների ույսնն և ու-
ղարկում իր լիազոր ներկայացուցչին—Մդիվանուն:
Խորհրդային կառավարությունը կարծում է, վոր հե-
տագա ուղարկան գործողությունները կը դադրեցվեն:
Տ. Ս. Ֆ. Խ. Հ. Արտաքին Գործերի Կոմիսար Զեչերին:

Առաջին է 12 նոյեմբերի:

Առավերտագիր № 6.

ԲԵԿԳԱԴՅԱՆԻ ՅԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱԺԻՆԻ ԶԲՈՒՅՑՑԸ

16 նոյեմբեր:

Յերևան.—Ապարատի մոտն և Նախագահ՝ Նախարարի
լիազորությամբ Քաղաքական Բաժնի վարիչ
Յակովով:

Թիֆլիս.—Ապարատի մոտն և Բնկապայան:

Այսոր ստացած Նախագահ, Նախարարի
հեռագիրը հազորդեցի Լեգանին: Վաղը նաև և
Մդիվանին աղեռվում են Ղարաբիլսա, ուր
նրանք յենթագրում են լինել վաղը չեմ մյուս
որ: Այստեղից Լեգանինը կը միանա (հեռագրով):
Յերևանի հետ բանակցությունների համար:

Յերևան.—Բնդունեք ձեր ծածկագրի պատասխանը:

Առաջինը՝ կառավարության անունից պատասխանեք Լեգանին, վոր նրա կողմից շուշափած հարցերը չափազանց բարդ են անհաշափած հարցերը չափազանց բարդ են անհաշափած պատասխան տալու համար: Կառավապաղ պատասխան մտածում են լուծել այդ հարցերը բանակցությունների միջոցով յիրք Լեգանինը կը հասնի Յերևան:

Յերկրորդ՝ կառավարությունը վորոշել են
Փորմալ կերպով ընդունել թյուրքերի վերջին
պայմանները: Հատ եյության—մենք ուղար-
պում ենք այսոր Կարս-Բերքեր Քյաղիմի մոտ
մեր ներկայացուցիչներին, վորպես վորչ

հասնելու անմիջական համաձայնության քի-
մալականների հետ առանց վորեե միջնորդի
մասնակցության այս ինքըում: Ձեր կողմից
շարունակեք բանակցություններն առանձին-
առանձին, ինչպես թյուրքերի, այնպես
և մեծամասնականների ու անդիացիների
հետ:

Թիֆլիս.—Վորոշնը են թյուրքերի վերջին պայման-
ները:

Յերևան.—Ձեզ հայտնի յեն նոյեմբերի 8-ի պայման-
ները:

Թիֆլիս—Այս, հայտնի յեն:

Յերևան.—Նրանց մասին են հենց խոսքը:

Թիֆլիս.—Սպառնում են արդյոք վասնգ Յերևանին:
Ի՞նչպիսի զբության մեջ են Դրուի զորքերը—
միթե նրանք ել չեն կավում: Յենթագրվում են
արդյոք վորեե փոփոխություններ կառավա-
րության մեջ: Լեգանին յես այլևս չեմ
տեսնի:

Յերևան.—Անմիջական վասնգ չկա: Այսոր մեր զորքերը
առանց կովե զրակեցին Ազինը: Հակառա-
կորդի կրկնակի հարձակումները յետ մզկե-
ցին: Փոփոխություններին արցը (կառավարական
կազմի) քննվել ե, բայց առ այժմ չի յին-
թագրվում: (Նույն գործ)

—

Վավերագիր № 3.

Պուրքիս Մահ Ազգային ժողովի
կառավարության Հաշտարար
Պետքանակություն, 26 հոյ հմբեմ
1920 թ.
Պատճենական թուրք

(•Բաղարական)

Համար 23.

Հայաստանի Հանրապետության Հաշտաբար Պատվիրակության նախագահության.

Զեր 26 սոյեմբերի 1920 թ. համար 7 գլուխանուն
պատուախանն է:

Յերեանի Հանրապետության դիմումի վրա, Խուս-
ական Սովետական Կառավարության Արտաքին Գոր-
ծերի Կոմիսարի կողմից միջնորդության առաջարկ և
յեղած մեր Կառավարության, արյունահողության վերջ
տալու նպատակով։ Մինչդեռ զինագաղաքը կնքված և
սկզբունքային պայմաններն ընդունված և յերկու
կողմից պատվիրակները Ալեքսանդրապոլում հավաքվե-
լու վորոշում տրված լինելով, Սովետական պատվի-
րակության ներկայությանը պետք չի մնացել և զի-
նագաղաքի համար Ալեքսանդրապոլ յեկած Զեր Ներ-
քին Գործոց Նախարար ԱՐԱՐԱՏՅԱՆ հայտնած և,
վոր Հայաստանի Կառավարությունը ևս չի ցանկա-
նում հիշյալի գանվիլն և վոր Հանձնաժողովը մեր
Կառավարության դիմելով այս մասին պատասխան
ստացած և, վոր նույն միտքն ունի և մեր Կառավա-
րությունը։ Արդեն մեր Հանձնաժողովը հավատալով

բանակցության սկսած լինելուն պատճառով այլուր միջնորդության պետք չի մնալը հայտնում եմ միաժամանակ հարգանքներովս միասին:

Թուրքիո Մեծ Ազգային ժողովի կառավարության Հաշտարար Պատվիրակության նախադաս Ֆերիկ.

ՔՅԱԶԻՄ ԿԱՐԱ-ԲԵՐԻՄ

Վավերագիր № 8.

ԱՐԵՎԱՏՅԱՆ ՔԵՄԱԼԻ ՀԵՌԱԳԻՐԸ

Քուրքիս Մեծ Ազգային ժողովի 29 նոյեմբերի 1920 թ., Ալեք-
կառավարության հաշտաբար սահմանադրությունը:
Պատճենակությունը համար 39.

Ալեքսանդրապոլում Հայաստանի Համբավետության Հաշտարար Պատվիրակության Նախագահ պետին:

Հայաստանի նոր կազմած կարինեաի Նախարար-ների Նախագահ և Արտաքին Գործերի Նախարար Վրացյանին ուղղակա թուրքին Մեծ Ազգային Ժողովի Կառավարության Նախագահից ստացած 29 նոյեմբերի 1920 թ., հռոագրի պատճենը ի ստորև հայտնուած է: Յերեանում ձեր Կառավարության և արված է:

Qumtikū:

Հայաստանի Հանրապետության եախարարակազմության
դ. Վրացյանին.

Գոհունակությամբ ստացա Զեր այն հեռագիրը,
վորով հայտնում եք, թե ՈՒանջանյանի կարինետի
հրաժարման վրա, Հայաստանի Պարլամենտի վորոշու-
մով նոր կարինետ կազմելու պաշտոնը Զեր հանձնված
է և հայտնում եք, վոր հարեան յերկիրների հետ բա-
րեկամական հարաբերությունները շարունակելու ցան-
կությամբ կազմված նոր Կառավարությունը հավան ե,
վոր Ալեքսանդրապոլում սկսված հաշտության բանակ-
ցությունները յերկուստեք փոխադարձ շահերի և
իրավունքների համաձայն մի վերջավորության հան-
գին: Յերկու ազգերի միջև հաշտությունը և անդորրու-
թյունը վերականգնելու համար կատարյալ անկեղծու-
թյամբ ձեռք առնված փոխադարձ վերաբերմունքնե-
րը հայտնի լինելուն պես, պարծենում եմ, վոր այս
առթիվ ալ ի զեպ և հաստատել, վոր Թուրքիո Մեծ
Ազգային ժողովի Կառավարությունը թե Հայաստանի
և թե մյուս դրացի ազգերի մասին միենույն զգաց-
մունքներն ե սնուցանում:

Հուսով եմ և անկառակած, վոր Ալեքսանդրապոլում
սկսված հաշտության բանակցությունները, հենված
փոխադարձ վասահության հիմունքների վրա—համա-
ձայն մեր հույժ ցանկության յերկու ազգերի համար
խաղաղության և հանգստության մի դարաշրջան ա-
պահովող հետևանքի կը հասնին:

Հայաստանը արտաքին ազգեցություններից ա-
պահովելու համար Զեր հայրենասիրական ջանքերին
մաղթում եմ կատարյալ հաջողություն:

Թուրքիո Մեծ Ազգային ժողովի Նախագահ՝
Մաւստաֆա Քեմալ:

Իսկականի հետ ճիշտ ե (ստորագրություն):

Վավերագիր № 9.

ԽԱՏԻՍՅԱՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ

Ալեքսանդրապոլից 29 նոյեմբերի 20 թ., Յե-
րեան:

Արտաքին Գործերի Մինիստրին:

Սահմանների կոնտրառառաջարկը տաճիկների
կոտանանք վաղը, մինչև այդ լեզրանի հետ բանակ-
ցությունները մեր կարծիքով պիտք ե հետաձգել:
Զեզոք զոնան աշխատեցեք մեր ագմինիստրացիայի
միջոցով: Կարա-Բեքիրը բացատրում ե, վոր դա կա-
տարվում ե իրա կամքի հակառակ մեծամասնական-
ների ձեռքով, Մղիվանիի գերը այստեղ վնասակար ե
մեր շահերի համար, նա գործում ե բացառապես իբրև
կուսակցական, Հայաստանը սովետացնելու նպատակով:
Պարզվեց, վոր վրացիք գաղտնի դաշն ունին տաճիկ-
ների հետ: Կարա-Բեքիրը հավաստիացնում ե, վոր Բա-
քու չի գնալու:

29 նոյեմբեր, 20 Ժամին. № 25.

Խատիսյան:

Վավերագիր № 10.

ԱԼԵՔՍՅԱՆԴՐԱՊՈԼԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ

Յերեան,
Վրացյանին:

Պատվիրակությունը և խորհրդականները միա-
ձայն գտնում են, վոր լեզրանի հետ բանակցություն-
ները պիտք ե հետաձգել մինչև մենք կը գանք վորոշ-

յեզրակացության թյուրքերի վելաբերմամբ։ Յեթե
ուզում եք վճռական քայլեր անել ոռուսների հետ, ըս-
տրս գտնում ենք, վոր նախորոք յետ պետք է կանչեք
մեզ այստեղից, այլապես մեր դեմք դառնում ե անհամա-
կանալի։ Չեզոք զոնայում դիմեցեք ուժեղ միջոցների։
այնտեղ աղմինիստրացիան կատարյալ բացակայում և
ուզարկեցեք լուրջ և խիստ պաշտօնյաներ։ Բազրա-
տունու վերաբերմամբ տալիս ենք հավանություն։ Նո-
րատունկանի և Վարանդյանի մասին Գյուլսանդա-
նյանը և յետ համաձայն ենք, իսկ մյուսները գտնում
են, վոր պետք է հետաձգել մինչև բանակցությունների
վերջանալը։

30 Առյամբարի 11 Ժամ:

(Հեռագրի պատճենը անստորագիր է):

Վավերագիր № 11.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱԼԵՔ-
ՍԱՆԴՐԱՊՈՂԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԽՈՍՀԵՑՈՒ-
ԹՅՈՒՆԸ

Դեկտեմբերի 1, Ժամի 22.

Զեր հաղորդած տեղեկությունը այժմ պիտի
քննվի Մինիստրների Խորհրդում և պատասխանը
կստանանք այսոր: Դժբախտաբար գեպքերի ընթացքը
Զեզ մոտ չափազանց տարբերվում և այսուեղի պայ-
մաններից, վորոնց վրա ուժգնորեն ազդումեն հաշտու-
թյան բանակցությունների պայմանները: Այժմ կհա-
ղորդեմ Զեզ ծածկագիրը, իսկ յես գնում եմ նիստի:

Խատիսյան.—Ի նկատի ունիցիքը, վոր այդ պայմանները մենք հաղորդում ենք անգիր, այժմ հենց թարգմանվում և այդ թարգիրենից և ձառըրեն կը հաղորդենք վազը ասավոտ, թեև ամենակարևորը մենք Ձեզ հաղորդեցինք: Ի դիտություն հաղորդվում և Ձեզ վոր նրանք հայտաբարեկ են, վոր այդ պայմանները ուլուիմատիվ են, թեև մենք կաշխատենք ամեն կերպ լավացնել կամ մացնել ուղղումներ: Առ այժմ վոքինչուրիշ չունինք (Հաղորդելո՞): Ի միջի այլոց խոսակցության ժամանակ փաշան հայտաբարեց, վոր նեյտրալ գոհայի ընակիչները իրենք հենց իրենց ցանկությամբ հանձնել են հաղարի չափ հրացաններ, և վոր իրենք ասած զարգացնում են զինվորական ուժերի պակասնեցման խնդիրը, ի նկատի առնելով զորքի ոգտագործումը ուրիշ ճակատներում և թերահավատությունը չակատամամբ նրա անցյալի պատճառով... Բարեկամությունը և հավատը կը զարգանան աստիճանաբար, և միևնույն պայմաններն են արվել Բուլղարիային և Գերմանիային:

8. *Subunit theta neurons*:

Վամինեազիր № 12.

**ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՎՈ-
ՐՈՇՈՒՄԸ**

Բյուրոն, Փրակցիան, կառավարությունը վիրուցիքին ընդունել կարմիրների առաջարկը սովորիվ մայակի մասին, գրել ենք վորոշ պայմաններ, վոր ճանաչվի Հայաստանի անկախությունը, հաշտություն

կնքել տաճիկների հետ, թույլ չտալ քաղաքացիական
կովկա մացնել կառավարության մեջ մերոնցից:

1 դեկտեմբեր, 20 ժամ:

— —

Պատերազմիր № 13.

ՎԵՐՋԻՆ ՊԱՀՈՒԻՆ

Ապարատի մոտ ե զինվորական մինիստրը—Յերե-
վանում:

Ալեքսանդրապոլ.—Այս ըոսդի ստացանք ակտ, վորի
համաձայն վողջ իշխանությունը հանձնված է Զեղ, Դրա
համար ել խնդրում եմ պարզաբանել, մնամ են ար-
դյոք իրենց ուժի մեջ հաշտության պատվիրակության
լիազորությունները, թէ նա յետ է կանչվում, նաև
այն մասին, մնամ ե արդյոք իր ուժի մեջ վրացյանի
կարինեալի թույլավությունը Զեղ հայտնի պայման-
ներով ստորագրել հաշտությունը: Կոնֆերանսի նիստը
նշանակված է այսոր ժամի 7-ին: Թուրքերը պահան-
ջում են պատասխան: Խնդրում ենք պատասխանել
առաջարկված հարցերին: Վոլդ գերեզման պատաս-
խանի յե սպասում ապահովատի մոտ:

Յերեան.—Յեր լիազորություններն իրենց ուժի մեջ
են մինչև ժամի 4-ը գիշերը: Այսոր ինձ ե հանձնված
յերերի վողջ իշխանությունը—մինչև Մոսկայից նշա-
նակված Ռեկոմի յերերի կառավարությանը անցնելլ:
Կարող եք միանդամայն հավատացած լինել վոր իմ
կողմից Յեր կազմած համաձայնության պայմանը
վոչ մեկ պարագայում չի խախտվի: Ինչ վերաբերում
է Զեղ հետագա լիազորություններին, կպատասխանեմ

Զեղ վաղը: Յես հավատացած եմ և հույս ունեմ, վոր
Խորհրդային Հայաստանը կը գտնե լնդհանուր լեզու
թյուրքիայի հետ, մանավանդ, վոր մենք համոզվել
ենք ճիշտ այնպես, ինչպես և թյուրքիան, վոր հեղա-
փոխական յերկրների միակ բարեկամը հեղափոխական
մուսխան ե:

Ալեքսանդրապոլ, — Հարց ունեմ տալու:

Յես Զեղ այնքան ել լով չհասկացա: Խնդրում
եմ վորոշակի պատասխանել, պահպանում և արգյուք
գերեզման իր լիազորություններն և կարմիր և նա
այսոր տալ վերջնական պատասխան կոնֆերանսում
և արգյուք ինչպես: Կամ թե սպահնեք Զեր կարգա-
զորություններին: Սակայն ի նկատի առեք, վոր թուր-
քերը յերեկոյան սպասում են պատասխանի, իսկ
վաղը չե մյուս որ յերեկոյան լրանում և զինադա-
դարի ժամանակը: Սպասում եմ պատասխանի:

Յերեվան.—Յեղ պատասխանեցի վորոց: Մինչե
այսոր ժամի 4-ը զեկավարվեցեք հին կառավարու-
թյան բոլոր հրահանգներով: Նոր հրահանգների և նոր
լիազորությունների մասին կը պատասխանեմ վաղը
մինչև ժամի 10-ը:

Յես այլև վոչինչ չունեմ (ասելու?):

Ալեքսանդրապոլ.—Այժմ յես հասկացա Զեղ և ու-
րիմի, նկատի առնելով այն, վոր այժմ հենց ժամի հինգն
և հետեւաբար մենք սպասում ենք նոր լիազորություննե-
րի և ինստրուկցիաների, վորովհետեւ քանի վոր հին կա-
ռավարության բոլոր ինստրուկցիաներն և լիազորու-
թյունները համարում ենք իրենց ուժը կորցրած:
Ճիշտ եմ արդյոք յես Զեղ հասկացել:

*Հայկական
Ժամ*

Յերեան.—Վոչ վոչ, Զեղ արված բոլոր լիազու բությունները մինչև գեկտեմբերի յերկուսի ժամի 4-ը դուք իրավունք ունեք լուծել և սառավորել մինչև վաղվա ժամի 10 առավոտը:

Ալեքսանդրապոլ.—Ուրեմն այսոր յերեկոյան դուք տալիս եք մեզ լիազորություն և իրավունք պատասխանել թյուրքերին ճիշտ այնպես, ինչպես այդ թույլատրել ե վրացյանի՝ կառավարությունը:


Յերեան.—Վոչ յես վոչ մի իրավունք և ցուցումներ Զեղ ներկայումս չեմ տալիս. մինչև իմ ցուցումների ստանալը կարող եք գեկտարվել հին կառավարության կողմից Զեղ արված լիազորություններով: Աւրիշ վոչինչ:

Ալեքսանդրապոլ.—Հարց՝

Իսկ յերբ կտանանք մենք Զեղնից լիազորություններ և ճրահանգներ: Ի միջի այլոց նկատի ունեցեք, վոր յեթե մենք այսոր վերջացնենք հարցը հին կառավարության ցուցումների իմաստով, գրանից հետո այլևս վոչ մի հնտափա ինստրուկցիայի և ցուցմունքի կարիք չի ուտանչվի:

Պատասխան Յերեանից.—Զեր գործն ե, ինչպես կվարեք, սակայն կոնկրետ պատասխանը ինձնից կը ստանաք վաղը ժամի 10-ին՝ կոմ 12-ին:

Առ այժմ:



Առավելագիր № 14.

ՄԻ ԴԵԿՐԵՏ

Ալեքսանդրապոլ—Յերեան. Յ գեկտեմբերի 20 թվ.,
19 ժամ:

Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախկին նախագահ Խատիսովին: Ալեքսանդրապոլ—Յերեան. Յ գեկտեմբեր:

Հաղորդվում է Զեղ ի գիտություն:

Հայաստանի Հեղկոմի կողմից Խորհրդային իշխանության մոմենտին—դեկտեմբերի 1-ին հին կառավարության կողմից նշանակված պատվիրակությունը վոչ մեկ իրավունք և լիազորություն ունի: Մինչև նոր պատվիրակության նշանակելը Հեղկոմը անմիջապես հարաբերությունների մեջ և մանում Թյուրքիայի Բարձր Ազգային ժողովի հետ: 7757.

Խորհրդային Հայաստանի սազմական ուժերի հրամանատար Դրությունը Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. կոմիսար Բ. Սիլին:

Բոլոր վավերագրերը քաղված են դաշնակցական կառավարության «Գործերից» (Հ. Ս. Խ. Հանրապետության Պետական Դիվան):

ՀԱՅԵԼՎԱԾՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սիմեոն Վարդյանը փասերի գեմ:

Եջ

- | | | |
|----|--|----|
| 1) | Գաշնակցությունը և տաճկահայությունը. | 4 |
| 2) | Հայաստանը 1920 թվին | 13 |
| 3) | Գաշնակցական պառավերակության կազմի և գործելակերպի մասին | 20 |

Նոյեմբերի 29-ը յեվ դեկտեմբերի 2-ը:

- | | | |
|----|---|----|
| 1) | Գաշնակցական կառավարության
քաղաքական ստրատեգիան 1920-ին | 25 |
| 2) | Ռլիթի ածուխը և խաղաղասիրական
բանակցությունները | 28 |
| 3) | Խուճապ | 35 |
| 4) | Նոյեմբերի 29-ը և դեկտեմբերի 2-ը. | 38 |


Գաշնակցությունը յեվ արեվելյան ժողովուրգենի
ազատագրական օարժումը:

- | | | |
|----|--|----|
| 1) | Յերկու խոսք գաշնակցական նոր
փիլիսոփայության մասին | 46 |
| 2) | Մի քանի խոսք անցյալի մասին | 49 |
| 3) | Հայերի անտեսական գերը Արե-
վելքում | 54 |
| 4) | Ի՞նչ անել | 61 |

ՀԱՅԵԼՎԱԾՈՒԹՅՈՒՆ

- | | | |
|-----|--|----|
| 1) | Թյուրք Մեծ Ազգային ժողովի արտաքին
գործերի կամխարք Բեքիր Սամիի հեռա-
զելի պատճենը | 69 |
| 2) | Գաշնակցական նախարարք Դավարյանի
հեռազելի պատճենը | 71 |
| 3) | Գաշնակցական կառավարության գյուղ-
տանի գիւղնապիտական ներկայացուցիչ
Բեկպալյանի հեռազելը | 72 |
| 4) | Արեկելյան ճակատի հրամանատարք Քյա-
զիմ Կարա Բեքիր փաշայի հեռազելի պատ-
ճենը | 73 |
| 5) | Ռ. Ա. Յ. Հ. գրաքին գործերի կոմի-
սար Զիչերինի հեռազելի պատճենը (12
նոյեմբեր 1920) | 73 |
| 6) | Հայաստանի հանրապետության Քաղա-
քական Բաժնի և Բեկպալյանի խոսակ-
ցությունը | 74 |
| 7) | Թյուրքայի Մեծ Ազգային ժողովի կա-
ռավարության հաշտարար պառավերա-
կության նախազահ Քյազիմ Կարա-Բե-
քիրի հեռազելի պատճենը | 76 |
| 8) | Թյուրքիայի Ազգային Մեծ ժողովի նա-
խազահ Մուստաֆա Քևալի հեռազելի
պատճենը | 77 |
| 9) | Խատիսյանի հեռազելը (29 նոյեմբեր)
Ալեքսանդր Ալեքսանդրից | 77 |
| 10) | Գաշնակցական կառավարության Ա | |

- պոլի պատվիրակության հեռագիրը (30
նոյեմբերի) 79
- 11) Հայաստանի կառավարության և Արքա-
պոլի պատվիրակության խոսակցությու-
նը (1 դեկտեմբերի 1920) 80
- 12) Դաշնակցության Արհելյան բյուրոյի վո-
րոշումը (1 դեկտեմբերի 1920) 81
- 13) Նոր կառավարության ներկայացուցիչ-
ների և Արքապոլի պատվիրակության
խոսակցությունը (2 դեկտեմբերի 1920) 82
- 14) Խ. Հ. Առաջարկան ուժերի հրամանա-
տար Դրոնի դեկտեմբեր (1 դեկտեմբեր
1920) 85
-



4
ՀՀ Ազգային գրադարան

NL0194508

